

15109

Դ. Ա. Խ. Ն.

ԱՐԵՎԱՄՏՅԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱ

32(47.7)
Մ-72

ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՅԱՐԱԳՅԱՆ • 1939

26 SEP 2006

Գրալեռութեան բայոր յերկրմերի, միացե՛ք

1 DEC 2009

Դ. ՄԻՆ

32(47.7)

15 - 79

ԱՐԵՎՄՏՏՅԱՆ
ՈՒԿՐԱԻՆԱ

01 JUL 2013

15709

1939թ. սեպտեմբերի 17-ին Խորհրդային կառավարությունը ընդունեց պատմական վորոշում՝ ողնության ձեռք մեկնել ուկրաինացի ու բելոռուս յեղալրներին, վորոնք անանկացած լեհական պետության ձախորդ զեկավարների կողմից թողնված ելին բախտի քմահաճույքին։ Միլիոնավոր ուկրաինացիներ յերկար տարիների ընթացքում տընթում ելին լեհական սկաների լծի տակ և յերազում՝ ազատազրության մասին։ Զքողարկված հույսով նրանք նայում ելին դեպի Արևելք, վորտեղ այլևս չկա իշխան ու կոմս Ռաձիլիլների, Պոտոցկիների, Վիշնեվեցկիների իշխանությունը, վորտեղ յերեսուն միլիոնանոց ուկրաինական ժողովուրդը, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ յեղայրական գործիք կնքած, կառուցում ենոր, յերջանիկ կյանք։ «Մենք գիտելինք, — ասաց Արևմտյան Ուկրաինայի դյուզացի Մարչուկը՝ Կարմիր Բանակի զորամասերը նրա դյուզը մտնելու ժամանակ, — թե ինչպես ուրախ ե ապրում դյուզացիությունը սահմանի այն կողմում, Խորհրդային յերկրում։ Յերբ լուսադեմին մենք զնում ելինք աշխատելու կալվածատիրոջ մոտ, մենք նայում ելինք դեպի արեւելք, վորտեղից ծաղում եր վառարեղակը, և ասում ելինք։ «Ահա նա, չերմ արեղակը, վորը ծաղում ե այն կողմից, վորտեղ կյանքը բավ ե։ Վրա հասան, վերջապես, ուրախորեր նաև մեր կյանքի մեջ, իրականացան մեր յերազանքները»։

Նոր կյանքի արեղակը լուսավորում ե Արևմտյան Ուկրաինայի գաշտերը, դյուզերը և քաղաքները։ Անցան բըռնության, աղքատության և իրավազրկության սև որերը։ Զկա այլիս լեհական կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումը, ինչպես նաև՝ չկա լեհական պետությունը, այդ խորթ մայրը և ժողովուրդների բանտը, պետություն, վորը փրկեց ինչպես թղթե տնակ։ Արևմտյան Ուկրաինայի աշ-



6366
39

Д. МИН
ЗАПАДНАЯ УКРАИНА

Государственное издательство полит. литературы
Ереван 1939

իստասեր և աղատասեր ժողովուրդը խորհրդային ժողովը աջակցությամբ ուղղում է իր մեջքը, ձեռք և բերում չայրենիք, վորից նա զրկված էր, իսկ նրա հետ մեկտեղ ձեռք և բերում աղատություն, խաղաղություն, կուլտուրա, յերշանկություն:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐԵՄԻ ՅԵՐԿԻՐ Ե

Արեմայան Ուկրաինան—Գալիչի յերկիրը և Վոլինը—յեղել և ուռատկան վաղեմի յերկիր, վորտեղ շատ վաղուց ընակվել են ուռաներ և ուկրաինացիներ: IX—XI դարերում այն մտնում էր Կիևյան պետության կազմի մեջ: Խնչվես հայտնի յէ, հատկապես այդ ժամանակաշրջանում կազմավորվեցին և՛ վելիկոռուսական, և՛ ուկրաինական, և՛ բելոռուսական ժողովորդները, կոփուց ուռատկան մեծ ժողովրդի հզորությունը:

Կիևյան պետության անկումից հետո Վոլինը և Գալիչի յերկիրը վորոշ ժամանակ գոյություն ունեցան վորաբես Փեողալտկան ինքնուրույն իշխանություններ (Կհայ-յայտական ինքնուրույն իշխանություններ), իսկ այնուհետեւ— XII դարի վերջում ձուլվեցին Գալիչ-Վոլինական մի իշխանության մեջ, վորն իր հողերը փռել էր Լիտվայից մինչև Դանուբի հովիտը և Կարպատներից մինչև Կիևչչնա: Գալիչ-Վոլինական իշխանությունը կենտրոնական Յելլոպայի ամենից հարուստ, հզոր ու կուտուրական պետություններից մեկն էր:

Գալիչինայում և Վոլինում աճեցին առետրական և արևեստագործական մեծ քաղաքներ—Գալիչ, Լվով, Պերեմբիչ, Զվենիգորոդ, Վլատիմիր և ուրիշն: Գալիչ-Վոլինական իշխանությունն առեւտրական ու կուտուրական կազմ էր պահպանում Բյուզանդիայի, Հռոմի, Հռոմեարիայի ու Լեհաստանի հետ:

Դեպի Գալիչինայի և Վոլինի հարստությունները համար իրենց թաթը մեկնում են նրանց ուժեղ հարևանները—Լեհաստանը, Էլիտվան և Հունգարիան, Համախակի հարձակվելու ուռատկան իշխանության տերիտորիայի վրա: Տասներու ուռատկան իշխանության հերիտորիայի վրա: Տասներու ուռատկան իշխանության համարի ընթացքում իշխան Դանիել Թոմանովի մատուցած էր աղաջան և աղաջանի մատուցած էր աղաջան:

(1202—1264) համառ պայքար եր մզում լեհ-հունգար-լիտվական հափշտակիչների գեմ և աղդարնակության լայն ժամաների աջակցությամբ նրանց գուրս քշեց հարազատ յերկրեց:

Մոտ 150 տարի գոյություն ունեցավ Գալիչ-Վոլինական իշխանությունը: Բայց թաթարական չընդհատվող արշավանքները և ուռատկան մնացած յերկրներից կտրված լինելը XIII դարի վերջին—XIV դարի սկզբին հասցրին նրա թուլացման: XIV դարում (1387 թ.) Գալիցիան և Վոլինի մի մասն ընկնում են Լեհաստանի Ծծի տակ, իսկ Գալիչ-Վոլինական իշխանության մնացած հողերը անցնում են Լիտվային:

Արեմայան Ուկրաինան գառնում է լեհական վաղութացման որբեկոտ: Մի քիչ ավելի ուշ, XVI դարում, Վլախական Լեհաստանը, վորը միացել էր Լիտվայի հետ լեհ-լիտվական միասնական մի պետության մեջ (Речь Посполитая), հափշտակում և ուկրաինական նոր յերկրներ — համարյաթե Դնեպրի ամբողջ աջ ափը: Լեհական պաները հսկայական տերիտորիաների տեր դարձան և ձեռնամուխ յեղան ուկրաինական բազմամիլիոն բնակչության կողովումանն ու շահագործմանը: XVI և XVII դարերի ընթացքում Ուկրաինայի դյուլացիոնը վերջնականապես զրկվեց քաղաքացիական ու դույքային իր իրավունքներից ու դարձավ լեհական պաների տնտեսական անսահմանակալ շահագործման օրբեկոտ, շահագործում, վորն առանձնապես ուժեղացավ դրամական տնտեսության զարգացման կապակցությամբ և Լեհաստանը Ֆրանսիայի, Սլովակիայի և ուրիշ յերկրների համար հացի գլխավոր մատակարարող զանալու հետեւանքով: Զդուելով վորքան հնարավոր ե շատ հացահատիկ արտահանել արտասահման, լեհական կարվածատերերը բռնի կերպով հափշտակում են դյուլացիական հողերը, մարդարետիներն ու անտառները, կոռը հասցնում են հրեշտակին հափշտակի, մտցնում են նորանոր պահակները:

Լեհական խոշորագույն իշխանների ձեռքում կենտրոնացան անհաշվի հարստություններ: XVII դարի 40-ական թվականներին Յերեմիա Վիշնեվեցիին Պոլտավայի, Կրևին-չուղի, Լուբնիի, Ռոմնիի և 40 հազար դյուլացիական տնտե-

սությունների տեր եր : իշխան Ռատրոժսկին Վոլինում ուներ
40 դլյակ, 100 քաղաք և ավան ու 1300 գյուղ :

Պանից եր կախված դյուղացու կյանքն ու մահը : Գյու-
ղացիներն ամրացվել եյին նրանց թողած խղճուկ հողա-
կառներին : Նրանք առանց համապատասխան թույլավու-
թյան իրավունք չունեյին հեռանալու կալվածատիրոջ կալ-
վածքից : Կոռը, զանազան պարհակները դյուղացիներից
խլում եյին բոլոր ուժերը :

Յեթէ ԽVI դարում վոլինում մի տնտեսության պար-
հակը տարվա մեջ կաղմում եր 240 որ, ապա XVII դարում
այն արդեն կաղմում եր 304 որ : Շատ տեղերում կալվածա-
տերների համար աշխատում եյին չաբաթվա մեջ վեց որ,
իսկ յաթերորդ որը պետք ե միայն կանայք աշխատեյին :
Բացի կոռից, դյուղացիները բահրած եյին վճարում դրամով
և մթերքներով : Նրանք տանջվում եյին Փեռվալական զա-
նազան հարկերից — յերեխայի ծննդյան գեղջում, ամուս-
նության զեղջում, անսասուններն արածացնելու իրավուն-
քի համար, այսուր աղալու համար և այլն :

Ֆրանսական ինժեներ Գլյում Լեվասսեր դը-Բուլլանը,
վորը XVII դարում այցելել ե Ռուսաֆինա, այսպիս ե նկա-
րագրել դյուղացիների գրությունը .

«Այստեղ դյուղացիները չափանց աղքատ են, վորով-
հետև նրանք ստիրված են չաբաթվա մեջ յերեք որ իրենց
ձիերով աշխատել տիրոջ ողտին և նրան տալ, նրանից
ստացված հողի քանակի համաձայն, մեծ քանակությամբ
հացահատիկ, բաղմաթիվ աքաղաղներ, հավեր, բաղեր ու
ծուտեր զատկին, հոգեկալատին և ծննդյան տոնին : Բացի
դրանից, նրանք պետք ե տիրոջ համար փայտ կրեն և կա-
տարեն կոռի ուրիշ բաղմաթիվ տեսակները : Դրան գուղքն-
թաց, կալվածատերերը նրանցից դրամական պարհակ, ինչ-
պես նաև վոչխարներից, խողի ծուտերից, մեղրից, բոլոր
պտուղներից տրասանորդ և յերեք տարին մեկ անգամ յեր-
րորդ յեզն են պահանջում : Մի խոսքով, նրանք հարկադր-
ված են իրենց պարոնին տալ այն ամենը, ինչ վոր նրա
խելքին կիչի պահանջելու... Բացի ամենից գլխալորն այն
է, վոր նրանց տերերն ոգտվում են անսահմանափակ իշխա-
նությամբ վոչ միայն իրենց հպատակների գույքի, այլ և

կյանքի նկատմամբ : Ահա թե ինչքան մեծ են լեհական աղ-
ուրվականության արտոնությունները, վորն ապրում է կար-
ծես դրամատի մեջ, մինչդեռ դյուղացիները գտնվում են
կարծես թե քավարանում» :

Լեհական կալվածատերը ուկրաինական դյուղում ան-
ամահմանափակ տեր եր, ինքն եր դատ ու դատաստան ա-
նում : Ամենաչնչին հանցանքի համար դյուղացիներին բանտ
եյին գցում, ծեծում եյին : Պաները դյուղացիներին դարձրել
եյին ստրուկներ : Նրանց խոշտանելում, զանակոծում, կեն-
դանի թաղում եյին հողի մեջ, մերկ մարդկանց վրա սառ-
սամանիքի ժամանակի ջուր եյին լցնում և ստուցնում եյին,
չներով հալածում եյին, նստեցնում եյին ցցերի վրա,
կտրտում, կտոր-կտոր եյին անում : Շլյախտիչներն անպա-
տիժ կերպով բռնաբարում եյին դյուղացիական աղջկինե-
րին : «Յեթէ վորեւ մաղնատի մասին պատմիլի ճշմարիտ
պատմությունը, անպատճեն անդամ կսարսափի դրա-
նից» — դրում եր ուկրաինական մեծ պոետ Տարաս Շեկ-
չենկոն :

Անտանելի կեղեքումը ճնշում եր վոչ միայն դյուղա-
ցությանը, այլև ուկրաինական քաղաքային աղդաբնա-
կությանը : Ուկրաինական քաղաքներում յերկացին լեհա-
կան ավագները : Ողովելով իրենց իշխանությունից, նրանք
կեղեքում եյին բնակիչներին, հարկադրելով նրանց տուրք
վճարել բաղմադիմի առիթով՝ արհեստով զբաղվելու իրա-
վունքի համար, ամուսնության համար, ապահարզանի հա-
մար, ժառանգության համար : Ուկրաինական առևտրական-
ներն ու արհեստավորները իրավունք չունեյին ընտրովիի
պաշտոններ վարել քաղաքային ինքնալարություններում,
մանել համբարությունների մեջ, ունենալ առևտրական
խանութներ : Ուկրաինացիներին արդելուում եր զբաղվել
առավել յեկամատարեր արհեստներով՝ պահել զեղատներ և
բակալեյայի խանութներ, հատով կտորներ վաճառել, դի-
նու առևտուր անել և այլն : Ուկրաինացիներին արդելած
եր զբաղվել պատրաստություններով : Ուկրաինական յերեխա-
ների համար քաղաքային գպրոցների մուտքը փակ եր :
Լվովում, Արևմտյան Ուկրաինայի կենտրոնում, ուկրաինա-
կան արհեստավորներն ու առևտրականներն իրավունք

ունելին ապրել և ձեռնարկություններ բաց անել միայն մի փողոցի վրա, վորը կոչվում եր Ռուսկայա: Այդ փողոցից դուրս ուկրաինացիներին արգելված եր նույնիսկ կտտարել կը ունական ծխակատարություններ:

Քաղաքական ու տնտեսական կեղեգմանը միանում եր ազգային-կրոնական կեղեցումը: Պաները ուղում եյին լեհացնել ուկրաինական ժողովրդին, վորակեալի ընդմիշտ նրան անջատեն Մոսկովյան պետությունից, յեղբայրական ուռասական ժողովրդից: Նրանք բանի կերպով ուկրաինական ժողովրդի վղին վախթաթում եյին իրենց լեզուն, իրենց կուլտուրան, իրենց հավատը: Գաղութաբարենքը ուկրաինական լեզուն, ուկրաինական բազմագարյան կուլտուրան դիտում եյին վորպես «ցածր ռասայի», վորպես «դժադարական» կուլտուրա: Բնությամբ մատցվում եր կաթոլիկությունը: Ուկրաինական ազգաբնակությանը կաթոլիկացնելու նարատակով մացվեց յեկեղեցական ունիան, վորը դիտվում եր վորպես կաթոլիկական յեկեղեցու վորձը տապալիք: Քաղաքի և դյուզի բնակչությունը թշնամաբար վերաբերվեց ունիային, նրա մեջ տեսնելով ճորտատիրական ու աղղային ճնշման ուժեղացման ձևերից մեկը:

Սակայն ուկրաինական ժողովրդին չկարողացաւ կուրել բոլոր տեսակի խորամանկություններն ու հետապնդումները: Նրան չկոտրեց նաև ուկրաինական ջարդերի ամփքը, վորն անցավ ամբողջ յերկրով մեկ: Ահա թե ինչպես ենկարագրվում 1845 թ. հրատարակված նյութերի մեջ 1634 թ. Լուցկում տեղի ունեցած այլակի ջարդերից մեկը. «Յեվով ով ել վոր նրանց պատահեր, միայն թե ուսուն՝ լիներ, նրանց կողմից առանց վորեև խղճահարության ծեծվում և հաշմանդամ եր գարձվում—սրերով, փայտերով և աղյուսներով—կամ ավելի ճիշտը—քարերով... Մինչև մութն ընկնելը, անցնելով մերթ այն, մերթ այս փողոցով, նրանք ծեծում և ջարդում եյին ամեն մեկին, ով ընկնում եր նրանց ձեռքը, նույնիսկ բոլորովին անմեղին, միայն թե նա ոսուն լիներ... Զարդը շարունակվեց մի քանի շաբաթ»:

1 Ուկրաինացի:

Առելությունը դեպի լեհական պաներն աճում էր: Գերությունից փախչելով, գյուղական բնակչությունն ուժեղ թափով լցվում եր Ուկրաինայի անծայրածիր տափաստանները, ավելի ու ավելի ցածր իջնելով Դնեպրի և Արևելյան Բուլգի ուղղությամբ, վորտեղ գեռ չեր կարողացել համեմ Մյախտիչը: Հաղարավոր ուկրաինացի գյուղացիներ փախչում եյին գեպի հարավ, լրացնելով այստեղ հաստատված ազատ կազակության շարքերը: Միաժամանակ հաղարավոր ուկրաինացի գյուղացիներ փախչում եյին լեհական պաներից գեպի Մոսկովյան յերկրները, ուռասկան ժողովրդի միջնական միակ պաշտպանին:

1630 թ. այսպես կոչված «Զապորոժյան սեչի» ուայոնի կազակների թիվը համառ եր մինչև 80 հազար: Զապորոժյիներն ամենից ավելի ակտիվ, ամենից ավելի անհաջող մարտիկներն եյին լեհական պաների գեմ: Նրանք հաճախ են զլամալորել իր անկախության համար պայքարող ուկրաինական ժողովրդի ապստամբությունները:

Գյուղացիությունն ավելի ու ավելի հաճախ եր վոտքի յելում իր կեղեքիչների գեմ պայքարելու: Մերթ այստեղ, մերթ այստեղ բանկվում եյին ժողովրդական ապստամբություններ, վորոնք առանձնապես հաճախակի եյին գարձել XVI դարի վերջից: 1591—1596 թ. թ. Կոսինսկու զեկայացած խոչոր պաստամբությունն ընդգրկել եր Վոլինը, Բրացլավսկոյե և Կիևյան վոյեվոպությունները: Կազակություղացիական զորք զրավել եր ահազին տերիտորիաներ և մի շարք խոչոր քաղաքներ—Կիև, Լուցկ և ուրիշ: Ապստամբները քարուքանդ եյին անում կաթվածատիրական տները, պանական զլամակները: Չորս տարվա արյունալի պայքարից հետո ապստամբությունը ջախջախվեց լեհ-հուն-պարական զորքերի միացյալ ուժերով: Ապստամբության դաժան ձնշումը չեր կարող ուկրաինական ժողովրդին ստիպել վար գնելու զենքը:

Ամբողջ XVII դարը լիքն և Ուկրաինայի ազգային աղաւագրության համար աշխատավոր լայն մասսաների մղած հերսոսական պայքարով: 1630 թ. տեղի յե ունենում մի ապստամբություն, վորը զեկայավառում եր գետման Տարսա Ֆեոդորովիչը (Գուրով «Տարսա Բուլբա» վիակի հերոսը):

Ղերեյասլավի տակ տեղի ունեցած յերեք-շաբաթյա մարտե-
րից հետո լեհական զորքը ջարդվեց : Պաներն ստիպված յե-
ղան մի շարք զիջումներ անել կազակներին :

1637—1638թ. թ. Ռուկրախնան կրկին ընդգրկված եր ժո-
դովրդական լայն շարժմամբ :

Ամենից ավելի խոչոր ապստամբություն, վորն ընդու-
նել եր գյուղացիական հեղափոխության բնույթ, բանկվեց
1648թ.: Գյուղացիությունն ու քաղաքային աշխատավոր
բնակչությունը շարժվեցին Հյախտայի դեմ :

Մի քանի տարի տեսեց համառ ու արյունալի պայքարը :
Լեհական պաների հրոսակախմբերը կրեցին մի շարք խոչոր
պարտություններ՝ 1648թ. ժյուլտի Վոդիի, Կորսունի և
Պիմելայի տակ, 1649թ.՝ Զբորոժի և Զբորովյի (Գալի-
ցիա) տակ, 1651թ.՝ Վինիցայի տակ, 1652թ.՝ Բատո-
դի տակ և այլն : Մի ժամանակ կազակո-գյուղացիական
աշխարհազորը (ополчение) տիրում եր համարյա ամբողջ
Ռուկրախնային : Ապստամբության ղեկավար Բոդղան Խմել-
նիցկու արժանիքը կայանում եր նրանում, վոր նա ընդա-
ռաջ դնաց ժողովրդական մասսաների ակնկալություններին,
մասսաներ, վորոնք յեղացրական ոռու ժողովրդից ոգնու-
թյուն եյին սպասում, և դիմեց Մոսկվային՝ Ռուկրախնան
Մոսկովյան պետությանը միացնելու խնդրով :

1654թ. հունվարի 8-ին իրականացվեց ուկրախնական
ժողովրդի վերամիացումը ոռու ժողովրդի հետ : Զարմանա-
լի չե, վոր Մոսկվայի հետ պայմանագիր կնքելը Ռուկրա-
խնայում վերածվեց համաժողովրդական տոնախմբության :
«Ամբողջ Ռուկրախնայում ամբողջ ժողովուրդը այն մեծ հա-
ճույքով կատարեց . . . և ժողովրդի մեջ մեծ ուրախություն
յեղավ!», զրում եր տարեգիր Մամովիդեց :

Սակայն հետեւող պատերազմը վերջացավ Ռուսաս-
տանի և Լեհաստանի միջև կնքված մի համաձայնությամբ,
վորի համաձայն առաջինին մնում է ձախակինյա Ռուկրախնան-
ու կիւը, իսկ Արևմտյան Ռուկրախնան անցնում է Լեհաստա-
նին :

Պաները վերստին դարձան Վոլինի ու Գալիչինայի տե-
րեր : Ել ավելի անտանելի դարձավ նորտատիրական կեղե-

քումը : Գյուղացիական մասսաները դրան պատասխանում
են նոր ապստամբություններով : Առանձնապես նշանակա-
լից եր 1768թ. ապստամբությունը—այսպես կոչված կո-
լիմիչչինան, վորը յերգված է ուկրախնական մեծ պրետ
Շեվչենկոյի «Գարյանակներ» հայտնի յերկի մեջ :

Ամբողջ Ռուկրախնան ընդգրկված եր ապստամբությամբ :
Պանական ջոկատների գեմ ուղղված զինված պայքարին
մասնակցում եյին նույնիսկ կանայք : Ահա թե ինչպես և
նկարագրում Տարաս Շեվչենկոն ապստամբության եղիղող-
ներից մեկը .

Встало солнце. Украина
Дымилась, пылала.
Где в живых осталась шляхта,
Занершилась, дрожала.
А по виселицам в селах
Ляхи¹ в ряд висели
Чином старше. На прочих
Веревок жалели.
По улицам, по дорогам—
Груды трупов с ночи.
Псы грызут их, а вороны
Выклевали очи...
По дворам везде остались
Дети да собаки.
Даже бабы, взяв ухваты,
Ушли в гайдамаки.

Գոնայի և Ժելենյակի ղեկավարած ապստամ-
բությունը գաժանորեն ճնշվեց : Ինքը Գոնայն ըռնվեց լե-
հացիների կողմից և գազանաբար մասնատվեց :

Անընդհատ բռնկվող ապստամբությունները թուլաց-
նում եյին պանական Լեհաստանը, վորն առանց այն ել
ֆեոդալների շահագործման հետեւանքով դնում եր զեպի-
անկում, շահագործում, վորն արգելակում եր արտադրա-
գական ուժերի զարգացումը : Յերեք բաժանումների հետե-
վանքով (1772, 1793 և 1795թ.թ.) Լեհաստանը դադարեց
վորպես ինքնուրույն պետություն գոյություն ունենալուց :

1 Լեհացիներ :

Արեմտյան Աւկրաինայի տերթուրիան բաժանվեց Խուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև :

Աւկրաինական դրուզացիության գրությունը չփոխվեց. լեհական հողատիրությունը պահպանվեց, աղքային ճշումը չփառարեց: Աւկրաինայի աշխատավոր գրուզացիությունը, ինչպես նաև ուսւ ժողվուրդը, XIX դարում ել շարունակում է պայքարել ֆեոդալական և արգային ճնշման դեմ: Սակայն այդ պայքարը չեր կարող հաղթանակով վերջանալ, քանի դեռ դրուզացիության զեկավարությունը չեր անցնի պրոլետարիատին: «Միայն բանվոր դասակարգի դլամավորությամբ կատարված կոմբինացված ավատամքությունը կարող և նպատակին հասցնել» (Ստալին):

1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ուկրաինական ժողովրդի համար սովոր բացեց զեպի պատր զարգացում, նրան փրկելով կապիտալիստների և կարգածրատերերի լծից: Լենինի-Ստալինի մեծ կուսակցության զեկավարությամբ աճում է ամրանում և Խորչըգրային Աւկրաինան:

Արեմտյան Աւկրաինայի աշխատավորների բախտը այլ կերպ դասավորվեց:

1914—1918 թ. թ. իմպերիալիստական համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանը կրկին հանդես յեկավ վորպես ինքնուրույն, բայց բոլորովին անկենառուակ պետական կազմագրում: Նոր Լեհաստանը վերսալյան պայմանագրի զավակն եր, պայմանագիր, վոր հաղթող յերկրները—Անգլիան և Ֆրանսիան վրաթաթել ելին հաղթվածների վզին: Առանց պատմական, ետնողբաֆիական և տնտեսական պայմանները հաշվի առնելու Լեհաստանի կազմի մեջ մտցվել ելին տարբեր պետություններից հափշտակած մարզեր՝ աղքային տարբեր բնակչությամբ, վորոնք տնտեսական և կուլտուրա-քաղաքական տեսակետից ձգուում ելին զեպի ուրիշ կենտրոնների: Լեհական պետության բազկացուցիչ ժամանակակից աղքարնակության — ուկրաինացիների, բելուստների և ուրիշների տածած ատելությունը հափշտակիչների նկատմամբ քեզ եր անհանդուստացնում հետպատերազմյան Յեկուզայի բախտը տեղադրության ու կամացականության որյեկտի:

Պետական նոր կազմավորումը— լաթային, բազմազգ,

ուսարեցի տերթուրիաների կողոպուտի հաշվին ուսած Լեհաստանը, վորն ամրող զովին զլիսավորում եր փառած և վաճառված փառականների ու լրատաների կրիկի կողմից—հարկավոր եր Անտանտային վորպես վահան Գերմանիայի դեմ, իսկ զվարացությունը՝ վորպես պլազմարմ առաջին սոցիալիստական պետության՝ ԽՍՀՄ վրա հարձակվելու համար:

«Լեհաստանից, — գրում եր Լենինը, — Վերսալյան հաշտությունը սովոր չեր բուժություն, վորին... Անտանտան զիսում եր վորպես զենք՝ ուղղված բոլշևիկների դեմ»¹:

Այդ բանը բացահայտուեն խոստավանվեց Փրանսական պրեմյեր-մինիստրը, հակախորհրդային բլոկի կազմակերպիչ Կլեմանսոն, վորը Լեհաստանի կազմակերպման առթիվ 1919 թվին ասաց. «Բոլշևիկյան Ռուսաստանի սպառնալիքի զեմ մենք կառուցում ենք բարյեր վշալար»:

Լեհական պետության կազմի մեջ բռնի կերպով մըտցված մարզերի թվում դանիվեց նաև Արևելյան Ուկրաինան: Ճնշելով ուկրաինական աշխատավորների աղքային-աղաստական շարժումը, վոր ծալարվել եր 1919 թ. Գալիցիայում, լեհական իմպերիալիստները հափշտակեցին Արևմըտյան Ուկրաինայի մեծ մասը— Արևելյան Գալիցիան, վոլինը և ուրիշ սարուներ: Աւկրաինական մասացած հոգերն անցան Ռուսիային (Բուլգարիան): 1923 թ. Լեհաստանի կողմից Արևելյան Ուկրաինայի հափշտակումը սանկցիայի յենթարկվեց Անտանտայի «Դեսպանների խորհրդի» կողմից: Դա Խորհրդային հանրապետության զեմ ուղղված արշավարդներին Լեհաստանի ունեցած մասնակցության վարձատրությունն եր: Անտանտայի սանկցիայով լեհական հափշտակիչներն Արեմտյան Ուկրաինան վերածեցին իրենց զաղութիքի, ամենաղաղանային շահագործման, աղքային վայրենի ճնշման ու կամացականության որյեկտի:

ՀԱՐՈՒՍ, ԲԱՅՑ ՀԵՏԱՄՆԱՅ ՅԵՐԿԻՔ

Կարմիր Բանակի կողմից աղաստագրված Արեմտյան Ուկրաինայում կա մոտ 10 միլիոն բնակիչ, վորից 8 միլիոնը

1 Լենին, և. XXV, էջ 401:

Աւկրաինացիներ են: Արևմտյան Ռւկրաինան վարչական ռեպարտերից բաժանված եր նախկին Լեհաստանի հետեւյալ վոյշի վողությունների միջև. Լվովի (կենտրոնը՝ Լվով քաղաքը), Ստանիսլավովի (կենտրոնը՝ Ստանիսլավով ք.), Տարնովի (կենտրոնը՝ Տարնովով ք.), Վոլինի (կենտրոնը՝ Վոլինի ք.) և Պոլեսյեցի մի մասը:

Արևմտյան Ռւկրաինան իրենից ներկայացնում է ընդգարձակ հարթավայր, վորն ընդլայնական ուղղությամբ կտրված և Լյուբլինյան լեռների ճյուղավորությամբ, լեռներ, վորոնց բարձրությունը մինչեւ 600 մետր է: Հարավում անցնում են Կարպատյան լեռների ճյուղերը մինչեւ 2 հազար մետր բարձրությամբ, վորոնք հարուստ են զանագան հանածոներով: Հյուսիս-արևելքում ձգվում են Պինակի ձաշիճները:

Արևմտյան Ռւկրաինան ունի հավասարաչափ դասավոր-քած գետերի ցանց:

Հյուսիս-արևմուտքում նա վոսովվում է Վիսլայի վտակներով, Արևմտյան Բուլգով և Մանով, Հարավ-արևելքում՝ Դնեստր, Պրուտ և Ստիր գետերով: Արևմտյան Ռւկրաինայի գետերը ջրառատ են, տարվա ընթացքում նրանց ջրի մակարդակը խիստ փոխվում է, աշնանային և գարնանային հեղեղումները սովորաբար մեծ վնասներ են պատճառում բնակչությանը: Դնեստրը նախարկելի յէ, և նրա կարպատյան վտակները, ինչպէս նաև Բուլգը ու Պրուտը, ոգտագործվում են անտառանյութի լուրզարկման համար:

Արևմտյան Ռւկրաինայի հողը մոխրանման և, վորը հարավում անցնում է սեահողի, ինոներում—քարքարոտ և տվագոտ և: Ամենից լավ հողը—Պոդոլիայի և Սինոցի հողիներումն է:

Կլիմայական ու հողային պայմանների բազմազանությանը համապատասխանում է բուսականության մեծ բազմականությունը: Արևմտյան Ռւկրաինայի տարածության մոտ 30 %-ը ծածկված է եքսպորտային նշանակություն ունեցող անտառներով: Հարթավայրերում սաղարթավոր և մշշատերեւ տեսակի յէն (սոճի, յիղենի, կաղնի, հաճարի), լեռներում—միայն վշատերեւ անտառներ են: Կարպատների ճյուղերում կան լեռնային ալպիական մարգագետիններ—

գեղեցիկ արոտավայրեր անասունների և խոտհարքի համար: Արևմտյան Ռւկրաինայում աճեցվում են դյուղատնեսեական զանազան կուլտուրաներ— ցորեն, հաճար, դարի, վարսակ, յեղիպատացորեն, առվույտ, ճակնդեղ, վուշ, կանեփ, ծխախոտ, դալուկ, չաքարի ճակնդեղ, պտղատու ծառերից— տանձենի, խնձորենի, դամբուլ, ծիրանի, դեղձենի:

Արևմտյան Ռւկրաինան վոչ միայն դյուղատնեսության ծաղկման հեռանկարներ ունի: Նրա ընդերքում թագնված են բնական հսկայական հարստություններ, վորոնք կարող են արգյունաբերության զարգացման բազա լինել: Յերկրի հարավային և հարավ-արևմտյան ույշուններում (Կարպատների նախալեռնային մասը) կա նաև թթվածուի, քարածուի, ողոկիրտ (լեռնամոմ), կալիումի աղեր, մարմար, ցինկ, բնական գազ և ուրեւ: Այդ ույշուններում նշանակալից քանակությամբ լեռնային զետակների, վտակների ու լճերի առկայությունը մեծ հեռանկարներ ե բաց անում «սպիտակ ածխի» ջրային ռեսուրսների—ելեկտրական եներգիայի ողտագործման համար: Արևելյան ույշունները, մասնավորապես Վոլինը, վորը Լեհաստանի կազմում համարյա թե ամենից հետամնաց պրովինցիան եր հանդիսանում, նույնակեն հարուստ են հանածոներով: Վոլինի փոխ-վոյելով Գոլդ-լեվակու հաղորդագրությամբ (1934 թ.) յերկրաբանական հետազոտությունը հանդիպեց քարածխային և 95-տոկոսուց պղնձահանքի շերտերի: Հետագա հետափուզուներ չկատարվեցին, և Վոլինը յերկրաբանական տեսակետից բոլորսպին ուսումնասիրված չէ: Վոլինի քարածխանքերի պաշտամությանը՝ սկսած ալպազարերից և վերջացրած գրանիտով և անտպատ են: Վերջապես, Արևմտյան Ռւկրաինայի բոլոր ույշուններում մեծ հնարավորություններ կան դյուղատնեսական կարպատներից: Հարավային արգյունաբերության զարգացման համար:

Տնտեսական-աշխարհագրական տեսակետից Արևմտյան Ռւկրաինան կարելի յէ բաժանել մի շարք ույշունների, վորոնք համընկնում են յերկրի բնական հիմնական առանձնահատկություններին:

կարպատյան շրջանը իր անտառներով ու լեռնային տափաստաններով։ Բնակչության հիմնական գրադառները անասնապահությունն ու անտառային արհեստներըն են։ Այստեղ զարդացած է տնայնագործական փոքրիկ արդյունաբերություն։ Բնակչությունն ազրում է շատ խեղճ և հազարներով արտագաղթում է ուրիշ յերկրներ՝ վաստակածություն։

Կարպատյան նախալեռնային շրջանը — վորը հարավում ընկնում է Կարպատյան լեռների, իսկ Հյուսիսում հարթավայրերի միջին։ Զարդացած է հացահատիկի մշակությունը, անասնապահությունը, անտառային անտեսությունը և այգեգործությունը։ Այստեղ գոյություն ունի անհան արդյունաբերություն, այն ել զերազանցորեն՝ կաշի։ Թույլ է զարդացած, սակայն խոշոր հեռանկարներ ունի լեռնային արդյունաբերությունը (նավթի հանույթը, աղ և ուր.) և նրա պրոդուկտների մշակումը։ Բնակչության խտությունը՝ 1 քառակուսի կիլոմետրի վրա 125—150 մարդ։

Այստեղ կան առևտրական և արդյունաբերական միշտ շարք կհնարուներ.

Ստանիսլավով, վոր գտնվում է նավթային ռայոնում, Հայշլում և 51,4 հազար բնակիչ, յերկաթուղային խոշոր հանդեպյաց և, կան նավթաթորման, փայտամշակման գործարաններ, թղթի ֆաբրիկաներ և յերկաթուղային արհեստանոցներ։

Դրոգորիչ — նավթային արդյունաբերության կենտրոն և յերկաթուղային հանդեպյաց և, բնակիչները — 26,736, նավթի հանույթով զարդացած է բնակամենը 7100 բաննոր (1930 թիվ)։ Դրոգորիչի գավառում ստանում եյին իհական նավթի մեծ մասը (86 %), նաև ուրալ գազ, ողոկերտ և մեծ քանակությամբ քարազ։ Դրոգորիչի մոտերքում գտնվում են Արևմտյան Ռեկանայի նավթային խոշորագույն հանքերը — Բրիխալ քաղաքը։ Այստեղից նավթը խողովակների միջոցով տարվում է Դրոգորիչ և վերամշակվում է տեղի 8 գործարաններում։

Պերիմիլ — ուռասական հնագույն բերդ և, վոր գոյություն ուներ գեռ Գալիչ-Վոլինյան իշխանության ժամանակակից ժամանակներում։

Այդ ռայոնի նշանակալից կետերի թվին են գատվում Ստրիյ քաղաքը (30 հազ. բնակիչ)։

Ուղղության վրա Ուկրաինական թյուղայի շարունակությունն է հանդիսանում, հիմնականում գյուղատնտեսական ռայոն ե (ցորեն, գարի, յեղիպտացորեն, ծխախոտ և ուր.)։ ծխախոտի և գինեգործական զարդացած արդյունաբերությամբ։

Այստեղ է գտնվում Արևմտյան Ռեկանայի քաղաքական, տնտեսական և կուլտուրական խոշորագույն կենտրոնը — Լվով քաղաքը, վորը հաշվում է 300 հազարից ավելի բնակչություն։ Լվովը ընկած է Բուգ գետը թափվող Պելտեցի գետի ավաղանում։ Այն Արևմտյան Ռեկանայի հնագույն քաղաքներից մեկն է, վորը հիմնադրվել է 1241 թ.։ Գտնվելով Արևմտյան Յելլուպան Խոտախայի հետ միացնող առևտրական ճանապարհների կենտրոնում, Լվովը արագորեն վերածվեց առևտրական խոշոր քաղաքի։ Մինչ պատերազմը մանում եր Ավստրո-Հունգարիայի կազմի մեջ, 1918 թվին հափշտակվեց լեհաստանի կողմից։ Լեհական հափշտակիչները, արգելակելով Արևմտյան Ռեկանայի տնտեսական զարդացումը, հանգեցրին այն բանին, վոր Լվովը չդարձավ ինդուստրիալ քաղաք, չնայած վոր նրա ըրջակայքում կանովիթ, գործ ածուխ, քարազ։ Արդյունաբերությունը գերազանցորեն սննդի և շինարարական բնույթի յե, կան մի քանի փոքրիկ մեքենաշինական և քիմիական գործարաններ։ Լվովը կուլտուրական խոշոր կենտրոն է։ Այստեղ գտնվում են համալսարան, վոր հիմնված է զեռում 1784 թ., քարձագույն տեխնիկական ուսումնական հաստատություն, թանգարաններ, խոշոր գրադարաններ։

Պոլումիայի ռայոնում կան նաև հետեւյալ նշանակալից կետեր։

Տարնովուլ — ունի 32 հազ. բնակիչ, հացահատիկի և գյուղատնտեսական այլ պրոդուկտների առևտրի կենտրոնն է, յերկաթուղային հանդեպյաց և, զարդացած է շաքարի, ողուղի ալյուրի արդյունաբերությունը։

Կոլոմիյա — ունի 33,8 հազ. բնակիչ (1931 թ.), զարդացած է մանր և տնայնագործական արդյունաբերությունը

(Յ Հաղարք բանվորներ, գերազանցորեն դերձակներ, մանածագործներ, կառուցողներ, Հյուսներ) :

Գալիչ—ուստական հնագույն քաղաք է, X—XII դարերում յեղել ե Գալիչի իշխանության կենտրոնը:

Բուչաչ— հնագույն ամրոց, 7500 բնակիչ ունի, կանգինեղործական գործարաններ:

Ռավա Ռուսկա—Լվովի վոյելողության դաշտական քաղաք է: Լեհաստանը հավաքակել է 1918 թ.: Կան փայտասղոցման ու աղյուսի գործարաններ, անասունի առևտրի խոշոր կենտրոն է:

Վոլին, վորի մակերեսի 30 %-ը համարյա թե ծածկված և անտառներով, կան չհետազոտված հանածոների ահագին պաշարներ: Զարգացած և անտառային տնտեսությունը և հացահատիկի մշակությունը (հաճար, զարի և ցորեն): Ունի չնչին արդյունաբերություն, վորը գերազանցորեն վերամշակում և գյուղատնտեսական հումքը, շաքարի, զարեջրի և անտառային արդյունաբերություն: Տրանսպորտը չափազանց թույլ և զարգացած— յերկաթուղիների և խճուղիների խտությունը 2 անգամ ցածր է, քան թե լեհաստանի ուրիշ ույշուներում: Բնակչության խտությունը՝ 47 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա:

Առևտրա-արդյունաբերական ամենից ավելի խոշոր կենտրոնները հանդիսանում են.

Լուցկը—ուկրաինական հնագույն քաղաք է, վորի մասին հիշատակվում է գեռ 1075 թ., տարեղրի մեջ, XII—XIII դարերում Վոլին-Գալիչի իշխանության կենտրոնն է յեղել, այժմ 21 հազ. բնակիչ ունի. փայտի և հացահատիկի առևտրի կենտրոն է, կա թույլ զարգացած արդյունաբերություն՝ չուղունի, մահուդի և կաշվի մանր ձեռնարկություններ:

Ռովնո—ունի 20 հաղարք բնակիչ, յերկաթուղային խոշոր հանդույց է, կան մետաղագործական մի քանի մանր ձեռնարկություններ:

Գուրին—ունի 10 հազ. բնակչություն (մինչև 1914 թ. պատերազմը, յերք այդ քաղաքը մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ, բնակչության թիվը անցնում էր 25 հազ. մարդուց): Վոլինի հնագույն քաղաքն է, հայտնի յեր XI—XII

դարերում: XVIII դարում, յերք լվովից այստեղ տեղափոխվեց տոնալվածառը, Դուբնոն Արևմտյան Յելլոպայի հետ առևտրի խոշոր կետ էր հանդիսանում: Այժմ Դուբնոն դայլուկի առևտրի կենտրոնն է, արդյունաբերություն համարյա թե չունի, յեթե չհավենք կաշվի, սապոնի և փայտաղոցման մանր ձեռնարկությունները:

Կովել—ունի 20,8 հաղարք բնակիչ, յերկաթուղային հանդույց է, կան կաշվի և ուրիշ մանր ձեռնարկություններ:

Վլադիմիր-Վոլինսկի—ընկած և լուր գետի ափին, Վոլինի վոյելողության դաշտական քաղաքն է, ունի 12 հազ. բնակիչ, կան փայտամշակման ֆաբրիկաներ. ռուսական ամենահաջողույն քաղաքներից մեկն է, մի ժամանակ յեղել է Վոլին-Գալիչի իշխանության մայրաքաղաքը:

Ոստրոգ—Վոլինյան վոյելողության քաղաքն է, ունի 13 հազ. բնակիչ, կան կաշվի գործարաններ:

Վոլինի բոլոր քաղաքները կրում են հետամնացության և այլասերման կնիք-վորը լեհական հակատակիչների դաշտային քաղաքականության հետեւանքն է:

Արևմտյան Ուկրաինան, վորը միջին դարերում յեղել է ռուս-ուկրաինական ամենաառաջավոր պետություններից մեկը, տնտեսական զարգացման, ծաղկող աղբարային-արդյունաբերական յերկրի վերածվելու մեջ հեռանկարներ ունի: Պատմական բախտը ռուսական վաղեմի այդ տերետորիան բաժանել եր Ռուսաստանից և նրան զրկել եր այդ հեռանկարներից:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԱՄԻԹԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Լեհական բուրժուազիան և կալվածատերերը իրենց տիրապետության գրեթե 20 տարիների ընթացքում Արևմտյան Ուկրաինայի վերաբերմամբ անց ելին կացնում բացահայտ թալանչիական դաշտութային քաղաքականություն: Բնական հարստությունների գիշատիչ շահագործում, արդյունաբերության ու տրանսպորտի զարգացման արհեստա-

կան արդելակում, լեհական կարմածատերերի կողմէց ուկրաինական գյուղացիության կիսաֆեռալական կեղեգում և կողոպուտ—սրանումն եր Լեհաստանի «ազգային քաղաքականության» եյությունը:

Լեհաստանի սնանկացած կառավարողները բացահայտումն հայտարարում եյին, վոր Արևմտյան Ռեկրաինան, ինչպես նաև Արևմտյան Բելոռուսիան, վորոնք նույնիսկ պաշտոնապես կոչվում եյին «արևելյան կրեսոներ» (ծայրամասեր), հանդիսանում են լեհական մազնատների ներքին դաշութը: «Գազետա Պոլյսկա»ն—ֆինանսական կապիտալի որդանը, բացելիքաց վրում եր, «Արևելյան արդարացին ուայնները, վորտեղ շատ թույլ ե զարգացած արդյունաբերությունը, հանդիսանում են կենտրոնական և արևմտյան վոյեվոդություններում մշակող արդյունաբերական ապրանքների սպառման չուկա»:

Զնայած բնական նշանակալից հարստություններին և բնակչության համեմատական խտությանը, Արևմտյան Ռեկրաինան լեհական պաների տիրակալության հետեւանքով հանդիսանում է հետամնաց ազգարային յերկիր: Բնակչության 80—90%-ը զբաղված է գյուղատնտեսության մեջ և ապրում է գյուղերում, միայն 10%-ն է զբաղված լեռնահանքային և թեթև արդյունաբերության մեջ:

Լեհական գաղութարարները գիտակցարար կասեցում եյին արդյունաբերության զարգացումը Արևմտյան Ռեկրաինայում: Լեհաստանի կենտրոնական և արևմտյան վոյեվոդություններում, ինչենու այդ մասին բացահայտորեն հայտարարում եր նախկին փոխպետեմյեր Կլյատկովսկին, կենտրոնացված եր ամբողջ քարածիսային ու մետաղագործական արդյունաբերությունը, տեքստիլի, շաքարի, ցեմենտի, ելեկտրոտեխնիկական և արդյունաբերության այլ ճյուղերի 80 %-ը, գաղացին գործարանների և ջրմուղների 80 %-ը, ճյուղավորված յերկաթուղային ցանցը, տպարանների, կուլտուրական և ուրիշ հիմնարկությունների 80 %-ից ավելին: Իսկ Արևմտյան Ռեկրաինայում և Արևմտյան Բելոռուսիայում, միասին վեցըրած, գտնվում եր Լեհաստանի արդյունաբերական ձեռնարկությունների ընդամենը 5%-ը: Կենտրոնական ու արևմտյան վոյեվոդությունները, վորոնք

դրավում եյին յերկրի տերիտորիայի կեսից մի քիչ ավելին, սպառում եյին ամբողջ ելեկտրոններգիայի 93%-ը, արևմտական պարարտանյութերի և գյուղատնտեսական մեքենաների 80 %-ը, յերկաթի մոտավորապես 85%-ը և սուրճի ու թեյի 95%-ից ավելին:

Ամենից ազշեցուցիչը հանդիսանում է հետեւյալ փաստը: 1934 թ. Լեհաստանում արտադրվել եր 2,5 միլիարդ կիլոգրամ-ժամ ելեկտրոններգիա, — Արևմտյան Ռեկրաինային և Արևմտյան Բելոռուսիային հասավ այդ քանակության 1%-ից պակաս: 1% ելեկտրոններգիա յերկրի 40% տերիտորիայի համար: Կա՞ արդյոք սրանից ավելի լավ իլյուստրացիա լեհական կապիտալիստների թալանչիական քաղաքականության մասին՝ «արևելյան ծայրամասերի» հանդեպ:

Լեհական զաղութարարները լիկիդացիայի յենթարկեցին արդյունաբերական այն փոքրիկ ոչախները, վորոնք գոյություն ունենալին շատ առաջ Արևմտյան Ռեկրաինայում: Մինչ պատերազմը այսուղի բավականին ուժեղ զարդացած եր նավթային արդյունաբերությունը, աճում եյին ուկրաինական պրոլետարիատի կաղըքը: 1913 թ. Դրույրիչի ույանում համար 1,004 հազար տոնն նավթ, 1929 թվին՝ 556 հազար տոնն, իսկ 1936 թ.՝ միայն 389 հազար տոնն: Հարյուրավոր գյուղեր նավթ չեն գործածում, իսկ իրենց կողքին գտնված նավթի պաշարները չեն մշակվում:

Այդ նույն պատկերն է տիրում արդյունաբերության նաև ուրիշ ճյուղերում: Քարածխի արտադրանքը կազմում եր 1913 թ. հանույթի 39%-ը, ողոկերիտները՝ 54%-ը: Համարյա ամբողջովին լիկիդացիայի յե յենթարկված մետաղագործական արդյունաբերությունը: Վերջին տարիների ընթացքում փակվեցին գինեղործական, ոսլայի և շարապի տասնյակ գործարաններ: Գիշատիչ կերպով վոչնչացվում եյին Վոլինի անտառային հարստությունները՝ արտասկանանելու համար, իսկ անտառային արդյունաբերությունը անկայի վիճակի մեջ եր գտնվում: Փայտասղոցարանների և փայտափակման գործարանների հաղափոր բանվորները տարիներով անգործ թափառում եյին:

Վերջին 10 տարվա ընթացքում Արևմտյան Ռէկրախնայի արդյունաբերությունը ընդհանուր առմամբ կրծատվեց ավելի քան 40%-ով, իսկ նրանում զբաղված բանկուների քանակը՝ կիսով չափ:

Արևմտյան Ռէկրախնայի արդյունաբերության անմիտիթարական գրությունը վառ կերպով իլլուստրացիայի յետնթարկվում վոլինի վերաբերյալ հետեւյալ տվյալներով։ Առ 1926 թ. հունվարի 1-ը վոլինի վոյեվոդության մեջ հաշվում եյին ընդամենը 711 գործող և 94 չգործող ձեռնարկություններ լեհական պետության հիմնադրման որից Գործող ձեռնարկությունների մեծ մասը թեթև արդյունաբերության ձեռնարկություններ են։ Մննդի արդյունաբերության մեջ կային 523 գործող ձեռնարկություններ, 43՝ չգործող, փայտամշակման՝ 51 և 12, լեռնային՝ 21 և 22, շինարարական՝ 8 և 10, մետաղամշակման՝ 38 և 4։ Գործող ձեռնարկությունների բանկուների ընդհանուր քանակը՝ 5708, վորոնցից 323-ը՝ լեռնային արդյունաբերության և 262-ը՝ մետաղամշակման արդյունաբերության մեջ։ Վերջին տարիներում վոլինում և Արևմտյան Ռէկրախնայի ուրիշ ուղղուներում արդելված եր առանց ռազմական գերատեսչության թույլտվության նոր ձեռնարկություններ բաց անել։

Արևմտյան Ռէկրախնայում լեհական հափշտակիչների 20 տարվա տիրակալության որով նոր ճանապարհներ, հեռախոսային գծեր և այլն չեն կառուցվել։ Քաղաքների և ավանների կոմունալ տնտեսությունը բարձիթողի յեր արգած:

Լեհական պաների դաշտությային քաղաքականությունը բնական ուսուրաներով հարուստ յերկրամասի արդյունաբերությունը հասցեց մինչ գեղրադացիայի, մինչ լիմակատար թուլացման։ Գոյություն ունեցող արդյունաբերության մեջ տիրակալում եր լեհական և ուսարեկրյա (հատկապես նաևթային արդյունաբերության մեջ՝ 86%) կապիտալ։ Լեհական կառավարությունը վոչ մի միջոցի առաջ կանգ չեր առնում, վորպեսզի կասեցներ տեղական արդյունաբերության զարգացումը։ Այդ քաղաքականության կարևորագույնը մեկն, որինակ, յերկաթուղային բարձր

տարիներն ելին, վորոնք Արևմտյան Ռէկրախնային զբուում ելին շուկայի հետ կապվելուց։ Փայտի տրանսպորտը 200 կիլոմետրից ավելի տարածության վրա դերազանցում եր նրա գնին, իսկ հացահատիկի տեղափոխությունը արեւելքից արևմուտք կազմում եր նրա արժեքի 70%-ից ավելին։

Անբաժանելիուն դերիշվելով Արևմտյան Ռէկրախնայի արդյունաբերության մեջ, լեհական կապիտալիստները ուկրաինական և հրեական բանվորներին յենթարկում եյին գաղանային շահագործման։ Բանվորական որը հասնում եր 12—14 ժամի, տիրոջ քմահաճույքն անսահման եր։ Վոլինի և Արևմտյան Ռէկրախնայի ուրիշ վոյեվոդություններում բանվորի միջին աշխատավարձը միջին հաշվով յերկու անգամ ավելի ցածր եր վարչավայի վոյեվոդության լեհ բանվորի աշխատավարձից։

Աշխատանք ուներ բանվորների միայն աննշան մասը։ Բանվորների հակայական մեծամասությունն այնպիսի ճյուղերում, ինչպիսին կարի, կաշվի և ուրագործադպուրկ եր։ Կրիպիսի տարիներին (1929—1934) անցկացրած գործադրկության համար նպաստի իրավունքով ոգտվողների կանտինպենտի սահմանավակումը ամենից շատ հարվածեց Արևմտյան Ռէկրախնայի բանվորներին։ Այնպիսի քաղաքներում, ինչպիսին Լուցկը, Ռոմնոն և ուր և են, գործազուրկների միայն 5—10%-ն եր ստանում խղճուկ նպաստ։ Հաղարակոր վորակյալ բանվորներ և յերիտասարդություն հարկադրաբար ուղարկվեցին «հասարակական աշխատանքների», վորոնք ռազմական նշանակություն ունեյին, որինակ Դուբնո—Ռուցկ գծի ռազմական ամրությունների շենարարության վրա, վորպիսի ամրությունները նկատի եյին առնված ԽՍՀՄ գեմ պատերազմելու համար։ «Աշխատանքային ճամբարներում» գործազուրկները սովահար եյին միուս և մահանում հիվանդություններից։

Բանվորների գրության մասին, հաղարավոր գործադրկությունների տառապանքների մասին ամենից լավ պատմում են իրենք՝ այժմ աշխատավրված Արևմտյան Ռէկրախնայի քաղաքների և ավանների բանվորները։

«Լեհաստանում բանվորի համար անտանելի ծանր եր

ապրելը, — պատմում եր լեհ ռազմագերին կարմիր բանակի № զորամասի մարտիկներին. — Յես ծնվել և ապրել եմ Ստանիսլավով քաղաքում: Իմ ազգանունը Զայնաչկովսկի յե: Յես 29 տարեկան եմ: Իմ ամբողջ յերիտասարդ տարիներին յես չեմ տեսել լավ, մարդկային կյանք: Մշտական դործազրկություն, կարիք, սով, իրավադրկություն: Մի անդուչ խոսքի համար— 6 տարի բանտարկություն, ծեծ և դանակոծում: Յես ինք 2½ տարի դործազրուրկ եմ յեղել: Աշխատանք փնտուելու համար յես ընտանիքով թափառել եմ քաղաքից քաղաք, ապրել եմ մեծ կարիքի մեջ»:

Տարնապալի գերձակուհի-բանվորուհի Յենյա Պիլնելը ասում եր կարմիր-բանակայիններին. «Յես ուզում եյի սովորել, բայց ուսման համար հարկավոր եր վճարել 15—20 դրամի: Յես շաբաթվա մեջ վաստակում եմ միայն 12 դրամի: Ել ի՞նչպես կարող եմ յես սովորել»: 10-ժամյա աշխատանքից հետո Պիլնելը ողնում է մեքենավար-հորը, վորն աշխատում է շաբաթվա վորոշ որերին: «Յես նշանած ունեմ, բայց նա գործազրուրկ է: Մեղ չի կարելի ամուսնանալ», — մորմոքված սրտով պատմում եր աղջիկը:

Իսկ Բովնոյի դավանի մի ավանի հյուսն, վորը մի քանի տարի գործազրուրկ եր մնացել, ծիելով կարմիր-բանակայինի առաջարկած ծխախոտը, ասաց. «Այսպիսի ծխախոտ յես չեմ ծխել իմ ամբողջ կյանքում: Մեղ մոտ մի ութերորդ մակորկայի համար հարկավոր է աշխատել կես որ: Ինչ ծխախոտ—ինչ բան: Յես ամբողջ տարին լուցի չեմ տեսնում, ողավորմ եմ կայծքարով: Տանը աղ չկա: Մոռացել ենք, թե յերբ ենք ոճառով լվացվել»:

Նույնիսկ լեհական կառավարական աստիճանավորները ստիպված եյին բացահայտորեն հայտարարել, թե Արեմբոյան Ուկրաինայում բանվորական ընտանիքները սիստեմատիկաբար թերամնում են, բանվորների սպառումն ընկանում է:

Ահա թե ինչ է գրում աշխատանքի տեսուչ Գոլինա Կրաչելսկայան, վորք հետազոտել եր Լվովի վոյեվության բանվորների գրությունը, 1934 թ. Լվովում լույս տեսած «Правда об условиях труда» գրքում:

«Մնալի ծախսերը կլանում եյին բանվորական (միջին

աշխատավարձ ստացող) ընտանիքի բոլոր ծախսերի 66%-ը... Բյուջեյի այդպիսի կառուցվածքի դեպքում դժվար է զարմանալ, վոր հաղուստի, սպիտակեղենի, կոշկեղենի ծախսը 12%-ից չեյին գերազանցում, կուլտուր-լուսավորական կարիքների, հասարակական կազմակերպությունների համար կատարված ծախսերը կազմում էյին միայն 0,6%... Միջին տարեկան սպառումը 1927—1928 թ.թ. (դեռևս մինչև կրիզիսը) մեկ մարդու համար՝ կիլոգրամմներով հաշված. — թեյ—0,07, յուղ—1, ճարպ—8, միս, ձուկ և ուր. — վոչ լրիվ 19 կիլոգրամ: Սրանք եյին ամենալավագույն կոնյունկտուրային տարվա սպառման նորմաները: Կրիզիսի աղեցության տակ համարյա բոլոր մթերքների սպառումը ուժեղ կերպով նվազեց: Որինակի համար մատնացույց կանեմ, վոր շաքարի գործածումը ազգարնակության ամեն մի շնչի համար նվազեց 2 կիլոգրամով: Կարելի յե վճռականորեն պնդել, վոր բանվոր դասակարգի սպառումը նվազեց այլելի քան կեսով չափ: Հաճախ բանվորի ընտանիքում յերեխանները բոլորովին չպիտեն, թե ինչ բան է և ինչ համ ունի շաքարը»:

Բանվորների գրությունը հետազոտող մեկ ուրիշը՝ Կրժիվիցիկին գեռես մինչև կրիզիսը գրում եր. «Յեթե վոր մենք ուղենայինք գտնել մի յերկիր, վորն ամենից մոտ լիներ մեղ բանվորական բյուջեյի կառուցվածքի տեսակետից, ապա, վորքան ել դա պարագության թվար, — դա բոյքեցի հանդիկ բանվորի բյուջեն ե»:

Անտանելի շահագործումը, ազգային հրեշտակոր ձնչումը, Փաշիստական իշխանությունների հետազնդումները բանվորներին պայքարի եյին մղում իրենց տնտեսական ու քաղաքական ազատագրության համար: 1923 թ. Գերմանիայում տեղի ունեցող հեղափոխական դեպքերի և կրակովում բռնկված ազատագրության ազգեցության տակ ամբողջ Արևմտյան Ուկրաինայում առաջացան բանվորների մասսայական գործադուներ և քաղաքական ցույցեր: Տընտեսական գործադուները— տեղական և ալելի լայն մասշտաբի— չընդհատվեցին մինչև վերջին ժամանակներս: Իսկ 1936 թ. Արևմտյան Ուկրաինայի կենտրոնում— Լվովում առեղի ունեցան դեպքեր, վորոնք ալեկոծեցին սամբողջ յեր-

կիրը և արձագանդ գտան նրա սահմաններից շատ հեռաւ հոսքը վերաբերում է լվովի բանվորների քաղցի ցույցին, վարը վերածվեց զինված ընդհարման վոստիկանության և ժանդարմերիայի խոշոր ջոկատների հետ։ Վոստիկանությունը ցուցարաններին դիմավորեց հրացանների և զնդացիրների համագալուկով։ 20 սպանված և հարյուրավոր վիրավորվածներ — ահա Փաշիստական կառավարության պատասխանը ողնության առթիվ գործազուրկների արած դիմումին։ Բարիկագալային մարտերը լվովում շարունակվեցին յերկու որ։ Բանվորներին պաշտպանեցին քաղաքի աշխատավորները և մերձակա գյուղերի գյուղացիները։ Լվովյան գնդակահարությունը ալեկոծեց ամբողջ Լեհաստանը։ Բողոքի ընդհանուր գործազուրին, վորը պատասխան եր լվովում տեղի ունեցած գեղագիրին, մասնակցություն ունեցան հարյուր-հազարավոր բանվորներ, ծառայողներ, դյուդացիներ և աշխատավոր ինտելիգենցիան։

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՆԵՐԻ ԼԾԻ ՏԱԿ

Լեհական իմպերիալիստների գաղութային քաղաքականությունն ամենից կործանարար կերպով անդրադարձավ Արևմտյան Ռուսական տնտեսական հիմնական բաղայի՝ գյուղատնտեսության վրա։ Աղքատություն, քայլայում, սով, ֆեռուլական կեղեցում, մահացում և լիակատաք վայրենացում—այս եր ռուսական բաղմամիլիոն դյուդացիության վիճակը պանական Լեհաստանում։

Լեհական կալվածատերը ուրկրախնական գյուղատնտեսական տիրակալ տիրակալ եր։ Արևմտյան Ռուսականի հողային տարածության կեսից ավելին՝ 52%-ը պատկանում եր սպաներին։ Ստանիսլավովի վոյելովության մեջ լեհական 630 կալվածատերը տիրում եին ամբողջ հողի մաս 60%-ին, այն ժամանակ, յերբ 200 հազարից ավելի մասը դյուղացիական տնտեսություններ ունեին միայն հողային տարածության $\frac{1}{4}$ -ից մի քիչ ավելին։ Խոշոր մազնատ-կալվածատերի կալվածքները գրավում եին յերեմն ամբողջ գավառներ։ Կոմս Զամոյսկու կալվածքը փովում եր 60 հազ. հեկտար տարածության վրա և գրավում եր 5 պա-

վառ։ 30 հազար հեկտարից ավելի՝ գտնվում եր իշխաններ լյուրումիւսկու, Զարտորիյակու, կոմս Պոտոցկու և ուր տիւրակալության տակ։ Իսկ գյուղացիությունը պատապարվել եր մանր հողակտորների վրա, տառապելով հողագրկությունից և հողասակալությունից, ատելությամբ հայացքը հսուելով տիրական հսկայական կալվածքներին։

Գյուղացիական տնտեսությունը գաճաճային տնտեսություն է։ Արևմտյան Ռուսականի գյուղացիական բոլոր տնտեսությունների 50%-ից ավելին մշակում են վոչ ավելի, քան 2 հեկտար հող։ Առանձին զավառներում զաճաճային անտեսությունների տոկոսն ավելի բարձր է։ Ահա, որինակ, սրաշտոնական տվյալներ Ստանիսլավովի վոյելության մեջ հողերի բաժանման մասին. 1921 թ. տնտեսությունների ընդհանուր թվից (236988) 76,5%-ն ուներ 0—2 հեկտար, 24,2%-ը՝ 2—5 հեկտար, 5,9%-ը՝ 5-ից մինչև 10 հեկտար, 1,5%-ը՝ 10-ից մինչև 20 հեկտար, 0,5%-ը՝ 20-ից մինչև 50 հեկտար, 0,1%-ը՝ 50-ից մինչև 100 հեկտար, 0,3%-ը՝ 100-ից ավելի հեկտար (մինչդեռ խոչոր կալվածատերերի ձեռքին գտնվում եր վոյելության ամբողջ հողային տարածության 56,3%-ը)։ Այսպիսով, Ստանիսլավովի վոյելության մեջ 91,7%-ը գաճաճային և մանր տնտեսություններ են։

Արևմտյան Ռուսականայի գյուղացիները չափազանց քիչ հող ունենին։ Բայց այդ հողն ել ամենից վատն եր։ Ամենից ավելի հարմար և բերքատու հողամասերը պատկանում եին կալվածատիրոջը։ «Հողաշնարարության» ողնությամբ գյուղացիներին աստիճանաբար քում եյին ամենից վատ հողերի վրա։ Արևմտյան Ռուսականի մի քանի ուայոններում (հատկապես Գալիցիայում) գյուղացիական հողն այն վատ է, վոր համարյա վոչ մի բերք չի տալիս։

Գյուղացիներն անտառներ ու արոտավայրեր չունեն։ Արևմտյան Ռուսականայի արոտավայրերի և մարզագետիների նշանակալից մասը, ամբողջ անտառային տարածության գերակշռող մասը (մոտ 95%-ը) պատկանում եր կալվածատերերին և պետությանը։ Գյուղացին հարկադրված եր ստրկության զնալ կալվածատիրոջ մոտ, վորպեսզի վառելիք, անտառանյութ և արոտավայր ստանար։ Գյուղա-

ցիների և կալվածատերերի միջև այս հողի վրա մշտապես բաղմաթիվ կոնֆլիկտներ ելին տեղի ունենում:

Արևմտյան Ռւկրախնայի գյուղացիությունը վոչ միայն սակալահող, այլ նաև ձիազուրկ և : Գյուղացիական տների դեսից ավելին ձիեր չունեն, 25—30%-ն ունեն միայն մի ձի: Առջինի ռայուններում ձիազուրկ և մի ձի ունեցող տնտեսությունների տոկոսը հասնում է մինչև 86-%: Այսուեզ լեռական պաները դերազանցեցին ցարական թուսաստանին: Թուսական գյուղում ձիազուրկ տնտեսությունները կազմում են 29,2%, մի ձի ունեցողները՝ 30,3%: Հնարավորություն չունենալով մշակելու նույնիսկ իր գաճաճային հողարաժինը, ձիազուրկ գյուղացին, ճարը կտրած, ստիպված եր գնալ խոնարհվելու կալվածատիրոջը և կուլակին: Գյուղացիության ծանր դրության մասին վկայում և նաև մեծ քանակությամբ կովազուրկ տնտեսությունների առկայությունը: Ստանխալավովի վոյելողության մեջ տնտեսությունների մոտ մի յերրորդ մասը կովեր չունեն, կեսն ունի մեայն մեկական կթու կոլ:

Լեհական գաղութարարները մատը մատին չխփեցին գյուղացիության դրությունը թեթևացնելու և հողային սովը մեղմացնելու համար: Ճիշտ և, 1919—1920 թ. թ., Հեղափոխությունից վախենալով, լեհական կառավարությունը ընդունեց «Հողային ուժփորմի» որենքը և խոստացավ գյուղացիներին բաժին հանել կալվածատիրական հողերից: Իրականում «Հողային ուժփորմը» ռւկրախնական գյուղացիությանը հասցրեց ել ավելի մեծ ստրկացման: Գյուղացիներն առանց հետզնման վոչ մի հեկտար հող չստացան: «Ուժփորմից» շահեցին միայն կուլակները, իսկ կալվածատերները պետության և բանկերի ողնությամբ շահավետ դորժարք կատարեցին— բարձր գնով վաճառեցին իրենց համար անպետք հողերի ավելցուկները: «Ուժփորմի» հետեւ վահանքով ծախված ամբողջ հողի մեծ մասը (մոտ 2 միլ. հեկտար) ընկալ կուլակների և այսպես կոչված «ոտաղնիկների» ձեռքը: «Ուսաղնիկները»— դրանք լեհական գաղութարարներն են, փորոնք արհեստականորեն բնակեցին են պետության արևելյան ծայրամասերում, այսինքն՝ Արևմտյան Ռւկրախնայում և Արևմտյան Բելոռուսիայում:

Ծառայությունը վերջացրած սպաները և յենթասպաները— Պիլսուղակու լեզիոնների և 1920 թ. հակախորհրդային արշավանքի մասնակիցները, կուլակների տղաները ուկրաինական գյուղացիների հաշվին ձրիաբար հողամասեր ելին ստանում:

«Ուսաղնիկական» այլպիսի տնտեսությունների թիվը Արևմտյան Ռւկրախնայում հասնում է մոտ 10 հազարի: «Ուսաղնիկներին» բնակեցնելով արևելյան վոյելողությունների մեջ, լեհական պաները հենարան ելին ստեղծում՝ բարձրացարչուր ուկրախնական գյուղացիությանը ճնշելու համար: Սակավահող գյուղացիներին բաժին ընկալ միայն «Ուժփորմի» հետևանքով վաճառված հողերի վոքքի մասը, բայց սրա պատճառով նրանք պարտաքի տակ ընկան, վորը պետք ե վճարելին տաօնամյակների ընթացքում:

Հողի դներն անընդհատ ածում են: Լյուբլինի վոյելողության մեջ 1935 թ. մեկ հեկտար հողի գինը կազմում էր 5 հազ. գլուխի: Լյովի վոյելողության թժեշովի գալառում 1927 թ. մեկ հեկտար հողի գինը կազմում էր 51 ցենտներ հաճար, իսկ 1933 թ., հացահատիկի գների անկման հետևանքով՝ 182 ցենտներ հաճար: Այդ գալառում հարձարի բերքը ամենից լավ բերքատվության ժամանակը կաղմում էր 10,3 ցենտներ: Նշանակում է, միայն նրա համար, վորպեսզի գյուղացին մեկ հեկտար հողի գին վճարի, նաև պետք ե տար 17 ու կես տարվա հալաքած հաճարը: Իսկ յեթե դրան ավելացնենք, վոր չնչին հողակտոր ձեռք բերելու համար գյուղացին պարտք վերցրած դրամի տոկոսներ պետք ե վճարեր և նոր հողամասի վրա ծախքեր կատարեր, ապա համար հողականալի յեղանակում վոր սակավազոր գյուղացու համար հող գնելը նշանակում էր հետապա քայլացում: «Հարյուրավոր ու հագարավոր մարդիկ, վորոնք գնել են մանր հողամասեր, խեղդվեցին պարտքերի մեջ, պարտքեր, վոր չեն կազողանա վճարել վո'չ իրենք, վո'չ նրանց յերեխաները, վո'չ թուները, վո'չ ել նրանց ծոռները», — գրում էր «Վայզվոլե» թերթը:

Աղբարային «Ուժփորմը» լիկիդացիայի չենթարկեց հողային սովոր: Ընդհակառակը, այն դարձավ ել ավելի սուր:

«Ռեֆորմը» գյուղացիության նկատմամբ հերթական կողմուրտ հանդիսացավ:

Այսպիսին եյին լեհական իշխանավորների նաև մյուս միջոցառումները: Կառավարության կողմից անցկացրած «Հողաշինարարությունը» փաստորեն հասցեց չքալորում միջակ գյուղացիների նոր կողոպոման՝ ի շահ կուլակային խուսորային տնտեսությունների: Տասնյակ տեղերում ցրված գյուղացիական հողարաժինների միջով անց եյին կացվում ձանապարհներ, գերազանցորեն իհաշիլ չքալոր գյուղացիության հողերի: Լավագույն հողամասերն անցնում եյին կուլակներին, իսկ ամենավատ հողերը մնում եյին նրանց, ովքեր միջոցներ չունեցին խուսոր տեղափոխվելու: Հողաշինարարության ժամանակ գյուղացիներից վերցրին մարդագետինները: Գյուղացիական գաճաճային տնտեսություններն ի վիճակի չեյին ծածկել այն նոր հողամասերի յուրացման ծախսերը, վորոնք նրանց բաժին եյին ընկել՝ «Հողաշինարարության» հետևանքով: Հողաշինարարական աշխատանքները հաճախ հասցնում եյին հողի ուժասպառության: Գյուղացիական տնտեսությունների պարտքն այն ուսցններում, վորոնք հողաշինարարություն եր անցկացվում, աճեց 4—5 անգամ:

Ուտավելով հողերի մենաշնորհից, լեհական կարվածատերերը գյուղացիությանը խճճում եյին Փեռողարական մնացուկների ցանցով:

Գյուղացին խեղդվում եր իր չնչին հողարաժնի վրա և ստիպված եր կապալով հող վերցնել կարվածատիրոջից, իսկ դրա համար իր ընտանիքի հետմիասին զնալ աշխատելու նրա մոտ: Արևմտյան Ռուսակայի ռայոններում տարվա մեջ աշխատավճարում են 15—20 որ, այն ել ամառային աշխատանքների ամենայեռուն ժամանակ: Հաճախ գյուղացիական ընտանիքը տարվա մեջ աշխատավճարում ե 50—60 որ: Գյուղացին աեղ չունի անասուններն արածացնելու համար—պաները նրա արոտավայրերը խելել են, նա գնում է կարվածատիրոջ մոտ: Իսկ մարդագետնի կապալի կամ կարվածատիրական արոտավայրում կովին արածացնելու իրավունքի համար գյուղացիական ընտանիքը աղայի ողտին վճարում է աշխատանքով: Մի քանի ուայոններում մեկ կովը՝ մայիսից:

յեմբեր արածացնելու համար գյուղացիները կարվածատիրոջն աշխատավճարում են 35-ական որ: Գյուղացին անսունների համար կեր չունի—նա այն վերցնում է կարվածատիրոջից աշխատավճարով: Վորպեսզի կարվածատիրական անտառուց մի քիչ վառելափայտ ստանա, գյուղացին սեփական ձիով վարձվում է անտառային աշխատանքների: Աշխատավճարում եյին կարվածատիրոջը՝ անտառում պտուղներ հավաքելու, կարվածատիրական ջրհորից ջուր վերցնելու, աղայի հողով անցնելու և այլնի համար:

Արևմտյան Ռուսականայում խիստ զարգացած եր բնավարձով աշխատանքը: Գյուղացիներն իրենց խղճուկ ինվենտարով մշակում եյին կարվածատիրական դաշտը և դրա համար ստանում եյին բերքի չնչին մասը: Ստանիսլավովի և Տարնոպոլի վոյենովություններում կարվածատիրական կարվածքների համարյա ամբողջ հացահատիկը հավաքում եյին գյուղացիները: Կարվածատերերը բերքահավաքի պայմանների մասին գյուղացիների հետ համաձայնության եյին գալիս դեռևս ձմեռը, յերբ գյուղացիները ծայրահեղ կարեքի մեջ են լինում: Զքավորը ստիպված եր համաձայնվել ամեն տեսակի պայմանների, միայն թե կանխավճար ստանար հացահատիկով կամ անասնակերով: Վաղովից կու գալվածառում գյուղացիները հավաքում եյին կարվածատիրոջ հացը՝ բերքի ^{1/20} մասը ստանալու պայմանով:

Աշխատավճարը և բնավարձը կուլակային տնտեսությունների, և հատկապես խոշոր հողատեր հանդիսացող յեկեղեցու կողմից գյուղացիներին շահագործելու սիրված մեթոդն եր: Համարյա ամբողջ յեկեղեցական հողը, որինակ, Գալիցիայում, գյուղացիների կողմից մշակվում եր բնարերքով վճարելու պայմաններով: Հողերորականությունը ծիսակատարությունների համար գյուղացիներից փողից բացի վճարներ եր գանձում նաև բնարերքով և աշխատավճարումներով: «Մեր ծխում,—գրում եր «Վազվունե» թերթում մի գյուղացի, —մեռավ մի տնտեսատեր: Վորպեսզի վճարի թաղման ծախսերը, նրա կինն ստիպված եր համաձայնել 20 որ աշխատելու: Մի՞թե միայն նա յի: Մեզ մոտ շատ են այդպիսիները, վորոնց, յերբ գալիս ե հնձի

ժամանակը, հարկավոր և աշխատավճարել հարսանիքը և թաղումը»:

Երտընդիջությունը — գյուղացիական տնտեսության խարազանն է: Արեմայան Ռէկրաֆինայի հարավային ռայոններում մի տնտեսությանը միջին հաշվով ընկնում է 37 կտոր հոդ: Հաճախ դյուղացիական տնտեսությունը բաղկացած է լինում 100 փոքրիկ հողամասերից, վորոնք ցըլածեն կալվածատիրական հողերի միջև և միմյանցից 5—10 կիումետր հեռու յեն գտնվում: Երտընդիջությունը արմատավորում է աշխատավճարները, ուժեղացնում է կալվածատիրական կեղեքումը և ստրկությունը:

Կիսաֆեոդալական բնույթի տասնյակ դանազան պարհակները և տուրքերը խեղդում ելին գյուղացիությանը: Գյուղացիությունն առանձնապես տուժում էր, այսպես կոչված, «շարվարներից»: Այդ—պետության և տեղական ինքնավարության ոգտին կատարված աշխատանքային ճրի պարհակն է: Առաջ իշխանությունները «շարվարները» կերպում ելին միայն կարեոր, առանձնապես ստրատեղիական նշանակություն ունեցող ճանապարհների կառուցումների ժամանակ: Բայց 1935 թ. նոր որենք հրատարակվեց, վորը «շարվարներ» և մայնում բոլոր տեսակի ճանապարհների կառուցումների համար, դպրոցների և այլնի շինարարության համար: Նոր որենքի հետևանքով «շարվարային» որերի թիվը չափ տեղերում հասնում է տարվա մեջ 100—110-ի: «Շարվարներից» բացի, գյուղություն ունեն խճուղային պարհակ, ճանապարհներից անցնելու գանձումներ և այլն:

Ռէկրաֆինական գյուղացիության ստրկացումը կիսաֆեոդալական շահագործման ձևերով լրացվում էր հարկային ուժեղ ճնշումով: Հարկային սիստեմը լեհական պաների գաղութային քաղաքականության կարևորագույն լծակն էր հանդիսանում: Նույնիսկ լեհական բուրժուական տնտեսագետները ստիրգած ելին խոստովանել, վոր արևելյան վոյնությունները կրում ելին հարկային ավելի խոշոր ժանրություն, քան մնացածները: Համեմատության համար կրերենք Փինանսական յերկու ոկրուգների գյուղացիական Ռուսական կառավագանումը:

և Լուցկի հողային հարկի թվերը (զլոտիներով՝ մի հեկտարի համար):

Տնտեսության ծավալը (հեկտարներով)	Գրուճենմատը	Լուցկ
Մինչև 5	0,98	1,78
5—15	1,17	1,44
15—60	1,25	1,55
60—150	1,53	1,92
150—500	2,14	1,58
500—2000	2,35	2,28
2000-ից բարձր	1,34	0,97

Ինչպես յերկում է աղյուսակից, բուն լեհաստանում Գրուճենմի ոկրուգում, վորտեղ գյուղատնտեսական կուլտուրայի մակարդակը համեմատաբար բարձր է, չքամու ու միջակ գյուղացիության հարկումը ցածր է, քան Լուցկի ու ոկրուգում:

Իր ամբողջ ծանրությամբ հարկային լուծը ընկած էր մանր ու միջակ գյուղացիական տնտեսության վրա, շատ թույլ կերպով չոչափելով կալվածատերերին ու կուլակներին: Հողային հարկի 2/3-ից ավելին մուծում ելին չըալորներն ու միջակները: Հողային հարկից բացի լեհաստանում դոյլություն ունելին տասնյակ ուրիշ հարկեր, գույքային, կոմունալ, ինլենսատիցիոն, հավասարարական, ճանապարհային, յեկեղեցական և ծխային հարկեր, արտահանման պարզեների գանձումներ և այլն—ընդամենը 100-ից ավելի զանազան հարկեր ու տուրքեր: Գյուղություն ունելին տուրքեր կովի, խովի, ձիու, սագի և նույնիսկ չափ համար, քահանաների տները պահպանելու գանձումներ և այլն: Յեթե այլելացնենք նաև հրեհից ապահովագրելու համար կտառալող պարտադիր մուծումները, հարկադրական փոխառությունները, դրամական տույժերը, տուգանքները և այլն, ապա պարզ կդառնա, վոր հարկերի և պարտգերի մուծումների ընդհանուր գումարը չափ ավելի կանցնի գյուղացիական դաճաճային տնտեսության համախառն յեկամտից: Հարկերի ընդհանուրը գումարը, վոր Արևմտյան Ռէկրաֆինական դուրս եր կորզիլում գյուղացիներից, 8—10 անգամ չափ էր, քան ցարական Ռուսաստանում:

Հարկերն ու տուրքերը կլանում եյին գյուղացիական ազգատիկ տնտեսության բոլոր յեկամուտները։ Զուր չե, վոր ուկրաինական գյուղացիները իշխանությունների կողմացի արդելված յերդի մեջ յերգում եյին։

Через кладку иду на грядку
Тай си так гадаю—
Чи ще θ десь біда гірша,
Ніж в нашому краї?

Иду до дому, слезы роню,
Минаю ворота.
Сім податків, три добори,
А грошей—ні злата..

Գետական իշխանության ամբողջ ապարատը շարժման մեջ եր դրվում գյուղացիներից հարկերը գանձելու համար։ Հարկերը և պարտիկերը գանձելու համար ուղարկվում եր առաջանավորների, դատական կատարածուների մի ամբողջ բանակ, մեծ թվով պատժիչ եքսպելիցիաներ։ Նրանք վերդրում և վերցնում եյին գյուղացու խղճուկ ունեցած-չունեցածը—հացահատիկը, կովերը, հորթերը, ներքնակերը, տնային կահույքը։ Պարտապանների ունեցվածքը վաճառվում եր աճուրդով։ Այն ժամանակ, յերբ չքալոր գյուղացուց խլում եյին վերջին կովը՝ հարկերը վճարելու համար, խոչոր կալվածատերերը չեյին մուծում իրենցից հասանելիք դումարները։ «Ուզոր հողատերերի 80%-ից վոչ պակասը,—դրում եր անցյալ տարի «Ենցվոլեն» թերթը, —չեն վճարել հարկերը 1927 թվից, և անհայտ ե, թե ինչպիսի իրավունքի ուժով ե, վոր նրանց համար այդ բանն անպատճ և անցնում։ Շատ դեպքերում կալվածատերերին վճարումների մասին ծանուցադրեր չեյին ուղարկվում, հիշեցումների մասին խոսք ել չկար։ Այդ նույն ժամանակ գյուղացիներից վերցվում եյին վոչ միայն ձին, կովը, խողը, տնային թռչունը, այլ հաճախ՝ ներքնակները, բարձերը և այլն։ Իշխան Պաղինակին չեր վճարել 13,5 միլ. դրամի հարկը, իշխան Լյուբոմիրսկին՝ 3 միլ. և այլն—նրանց հետ կառավարությունը գործը «հաշոռությամբ» վերջացրեց և նրանց պարագը գուրս գրեց։ Միանվագ գույքային հարկը գանձվեց

գյուղացիներից և մանր արհեստավորներից, իսկ կալվածատերերից և խոչոր կապիտալիստներից չգանձվեց 700 միլիոն դրամի վոսկով։

Գյուղացիներին կողոպտում եյին վոչ միայն կալվածատերերն ու պետությունը, այլ նաև կապիտալիստական խոշոր մոնոպոլիաները։ Հսկայական գումարներ եյին դուրս կորպվում գյուղից անուղղակի հարկերի (աղի, շաքարի, լուցկու, ծիսախոտի և առաջին անհրաժեշտության ուրիշ պարկաների) և արտյունաբերական ապրանքների բարձր գների միջոցով։ Սեմի դեպուտատ Տերչակովցը եր յելույթներից մեկում բերեց հետևյալ տվյալները՝ արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների գների փոխհարաբերության վերաբերյալ։

1927/28 թ. 1935/36 թ.
(Կիւռգեամ հաճարով)

1 գութանն արժեր.	•	100	276
10 կլոր. շաքարն արժեր.	•	36	100
10 կլոր. սղն արժեր.	•	8	32
10 կլոր. ոճառն արժեր.	•	52	135
10 կլոր. կերոսինն արժեր.	•	16	40
1 կլոր. ծիսախոտն արժեր.	•	141	564

Վերջադրես, գյուղացիությունը չլսված կերպով տեսածում եր զանազան մոնոպոլիաների՝ ալյուրի, հացահատիկի մեծագնման մոնոպոլիայի և ուր. ճնշումից։ «Վոր կողմն ել վոր գյուղացին շարժվի, վոր կողմն ել վոր նայի, —հայտարարեց սեյմում դեպուտատ Դեմքիցկին, —նրան չըրաջապատճ են այնպիսի համաձայնություններ, ինչպիսին անասունների և խողերի մեծագնորդների համաձայնությունն ե, ինչպիսին հացթուինների համաձայնությունն ե այլն։ Մոնոպոլիաների ընորհնել գյուղացիությունը, և հական տնտեսագետ իվաշկեսիչի հաշվարկումներով, իր պրոդուկցիայի համար ստանում և միայն կեսը այն վճարի, վոր գյուղատնտեսական պրոդուկտների սպառովը վճարում ե շուկայում։ Մնացած կեսը յուրացնում են միջնորդները և վերաբնորդները։

Սակայնահողությունից չնշանակ լինելով, Փեռդալուկան մնացուկների ցանցով պատճ, պարտքերից յերեք

դուրս չեկող գյուղացիական դաճաճային տնտեսությունները նետվեցին աղքատության և քաջքայման անդունդի մեջ:

1—2 հեկտար ունեցող տնտեսությունն ի վիճակի չեկտրակրելու գյուղացիական ընտանիքը: Սովորական պայմաններում այլպիսի տնտեսության մեջ—հաճարի կամ ցորենի բերքը կազմում է միջին հաշվով 2,5 տեսաներ: 5 հոգուց բաղկացած ընտանիքին՝ սնվելու համար հարկավոր է ամենաքիչը 2,5 տեսաներ հաճար: Մնում է 1 տեսաներ, վորի համար գյուղացին կարող է 10—12 զլոտի (մեր փողով՝ 2 ու 20 կոպ. — 2 ու 40 կոպ.) ստանալ: Դա այն ամենն է, ինչ մնում է պարտքերը և հարկերը վճարելու համար, սերմացու և գյուղատնտեսական ինվենտար դնելու համար, անտառների կերի և ուրիշ կարիքների համար: Իսկ հաղուստի, կոչիկի գնո՞ւմը, խրճիթի և ջրհորի վերանորոգո՞ւմը:

Նույնիսկ 2—5 հեկտար ունեցող տնտեսությունն ի վիճակի չեկտրակրելու գյուղացիական միջակ ընտանիքին: Վերենում հիշված դեպուտատ Տերշակովեցն ընթացիկ տարվա սկզբին բերեց ավլայներ, վորոնք իլյուստրացիայի ելին յենթարկում մանր գյուղացիության դաժան կարիքը: Գյուղացիական սպառման սովորական նորմաներից յենելով, Տերշակովեցը հաշվեց, վոր 5 չունչ ունեցող գյուղացիական ընտանիքում, վորը մշակում է 3 հեկտարանոց հողաբաժին, հարկերը վճարելուց և առաջին անհրաժեշտության առարկաները դնելուց հետո մնում է տարեկան 749 կիլոդամ հացահատիկ, վորը դրամական արտահայտությամբ կազմում է 74 զլոտի: Դա ընտանիքը պահելու համար որպական 20 գրոշ է անում: Իսկ մի տուփի լուցկին արժեքը 10 գրոշ:

«Պարի Պարիզեն» թերթի թղթակիցը, վորը 1937 թ. շրջադաշել է Արևմտյան Ուկրաինայի գյուղերը, նկարագրել է գյուղացու բյուջեն, վորն ունի 3 հեկտար հող: Ընդմենը նա միջին հաշվով ստանում է 2400 կիլոդրամ հաճար: Դրանից 1900 կիլոդրամը դնում է հարկերը վճարելու և տնտեսության ամենից անհրաժեշտ ծախսերի և ընտանիքի հաղուստի վրա: Մնում է միայն 500 կիլոդրամ: Յերշրանով տարվա ընթացքում հարկավոր է կերակրել 7 հոգուց բաղկացած ընտանիքը և հալից ընկած ձին:

Այդպիսի անելանելի կարիքի մեջ եր ապրում ուկրաինական գյուղացիության հակայական մեծամասնությունը:

Մանր ու միջակ գյուղացիության տնտեսությունը դեպի անկումն եր գնում: Գյուղական լրջիթները թեքիլ ելին ցած դեպի գետինը: Ժամանակի ընթացքում սեացած, ծուռ, թեքված տանիքներով, կիսախավար փոքր պատուհաններով լարձիթներն արդեն յերկար տարիներ չելին վերանորոգվել: Ազգատ ու մերկ եր Արևմտյան Ուկրաինայի գյուղացին: Կյանքը տարեցարի գառնում եր ավելի ու ավելի ծանր: Գյուղացին հույս ուներ, վոր մի վորեւ ինվենտար ձեռք բերելով գուցե կհաջողվի հողից ավելի շատ յեկամուտ դուրս քամել, բայց անհնար եր—դրամ չկար: Արտադրության հիմնական գործիքները — յերկայուղանի փայտյա արորը և յեղենու դարպար ճյուղերով կապկպված տափանն ելին: Գութանը և յերկայուց ատամներ ունեցող տափանը հազվագյուտ ելին: Գյուղացին դարպար եր յերկայուցինը ուղարկված ուղարկվուա յելուց, փոխարինելով այն քարե կացինով: Նա այլևս յերկաթե մեխեր չեր ուղարկուածում, այլ դրանք փոխարինել եր փայտյա մեխերով: Նա դադարել եր ձիերին պայտելուց, ինայելով յերկաթի ամեն մի կտորը: Արհեստական պարարտանյութերի գործածումը խիստ կրծատվեց: Գյուղացիական տնտեսությունը իսկական անկում եր ապրում: Յերես, Յերշրանով վոչ մինչև 1936 թ., չկար բացառությամբ իսպանիայի՝ մինչև 1936 թ., չկար այդպիսի հետամնաց գյուղատնտեսություն, այդպիսի ցածը բերք, արտադրության այդպիսի անդրջնեղեղյան տեխնիկա, վորպիսին Արևմտյան Ուկրաինայումն է: Բերը իտարիներն ավելի ու ավելի հազվագեց են դառնում: Անրերիթյունը, սովը ավելի ու ավելի հաճախ են կրկնվում: Կերի բացակայությունը պատճառ դարձավ անառուների ավելի շատ կոտորման: Ուկրաինական «Դիլօ» թերթում հրապարակված նամակի մեջ Արևմտյան Ուկրաինայի Մերձկարպատյան ուայնի մի գյուղացի գրում եր.

«Համարյա ամեն տարի ձմեռն ու գարնանը մեր յերկամասում լավում են հուսահատության հառաչանքներ—«ոով ե», «կոտորվում ենք»: Սակայն այս տարի դրությունը այնքան ծանր է, վոր կատաստրոֆան անխուսափելի

Այս տարվա ապրիլի առաջին յերկու շաբթում կուտք-վեց գյուղացիների անասուններից 1562 դլուխ: 20 հազ.-ից ավելի անասուններ, այսինքն՝ ամբողջ քանակի 40—50%-ը, մինչ այն աստիճան քաղցից հյուծված էն, վոր ընկած են գամերում և ի միհակի չեն վեր կենալու: 1937—1938 թ. թ. ընթացքում մեր յերկրամասի Տուրկանսկի գավառում սատ-կեց 16250 դլուխ անասուն, այսինքն՝ գյուղացիական ամբողջ անասունների 28%-ը: Անասունների մասսայական անկու-մը, վորն առաջացել եր անասնակերի բացակայությունից, միակատար կատաստրոֆ եր նշանակում սակալահաջող դյու-ղացիության համար»:

Գյուղացիական ընտանիքը բառացիորեն քաղցում եր, նո մոռացել եր այսպիսի պրոդուկտների գործածության մասին, ինչպիսին շաքարն ու աղն են: Պաշտոնական վիճա-կագրության տվյալներով, շաքարի գործածությունը Վոլգ-եի գյուղերում 1929 թվից պակասել է 93%-ով, աղինը՝ 87%-ով, նավթինը՝ 72%-ով:

Ահա թե ինչ ե պատմում կարմիր Բանակի մարտիկնե-րին գյուղի կյանքի ու կենցաղի մասին Զալեսցի գյուղի մի գյուղացի.

«Մարդկային կյանք յես դեռ չկտու չկտայի: Հողի չնչին մի կտոր, ե՛լ ավելի փոքրիկ բանջարանոց, մի քանի հալ—ահա իմ ամբողջ անտեսությունը: Հարկադրված եյի ավելի շատ հարկ վճարել, քան արժեքը իմ ամբողջ կայքը: Պարտքնի տակից յերեք դուրս չեմ յեկել:

Զքավոր գյուղացիները վաղուց ե, վոր նոր հագուստ չեն հագնում: 18—20-ամյա շատ յերիտասարդներ ամա-չում են ցերեկը փողոց դուրս դալ—նրանք հաղնելու բան չունեն: Ցերեկոյան գյուղը համարյա թե լիակատար խա-վարի մեջ ե թաղվում: Հազվագեղ ե այսպիսի իրմիթը, վորանդ կրակ ե փայլկում: Յեկ այն ել մարին ե մխում: Նավթի լամպի մասին վաղուց մոռացել են»:

1933 թ. Վարշավայի սոցիալական եկոնոմիկայի ինս-տիտուտի հրատարակած «Письма крестьян» գրքի մեջ հրապարակված են գյուղացիների պատմածները, վորոնք նկարագրում են աղքատության, սովոր և գյուղի աներթնելի գրության կոչմարային պատկերը:

Ահա թե ինչ ե գրում Զամոյտկի գավառի մի գյուղացի: «Յես մի խրճիթի մեջ եմ ապրում խորթ վորդուս հետ, վորը թեև բաժանվել ե, բայց ապրում ե ինձ մոտ, քանի վոր նա իր խրճիթը չունի: Իսկ ի՞նչ ե գտնվում մեր խըր-ճիթում: Յերկու մահճակալ, վորոնք ծածկված են կոշտ աղեալներով, սեղան և մեր ձեռքով պատրաստած յերկու աթոռ: Ահա և ամբողջ կահկարասին: Այդ խրճիթի մեջ ապրում ենք վեց հոգի:

Ավելի վատ գրության մեջ ե սննդի դործը: Ամառը, յերբ մի քիչ կաթ կա, դեռ այնքան ել սարսափելի չե, բայց ահա ինչպիս անել, յերբ տանը վոչ մի կաթիլ կաթ չկա, վոչ մի կտոր միս կամ ճարպ չկա, յերբ յուրաքան-չյուր խոճկորը, վորը նույնիսկ դեռ չի չաղացել, հար-կադրված ես վաճառել, վորպեսդի վճարես հարկերը և ձմեռված համար կոշիկներ և մի վորես հակուստ գնես: Առանց կրոնական վորես պատվիրանի այնպիսի պաս ևս պահում, վոր մինչև զարունը դա և կուլ սկսի կաթ տալ, բոլորը չորանեռ են ինչպիս տաշեղներ»:

Նույն գավառի սակալահաջող մի գյուղացի գրում ե.

«Այժմ մենք մեղ զիկում ենք վճռաբար ամեն բանից: Շաքար մենք չենք գործածում, թերես միայն մեծ տոնե-րին, աղը իննայում ենք,—այն շատ թանդ ե: Կանայք կրա-կը տնից տուն են տեղափոխում յերկաթյա պտուկի մեջ, իսկ ամեն մի լուցկին յես բաժանում եմ յերկու, իսկ յեր-բեմն ել չորս մասի: Կերպունը և լամպը մեղ մոտ գյուղում —շեղություն ե: Խրճիթները պարզապես լուսավորվում են մարմարով, իսկ յես դեռ յերազում եյի, թե կալրեմ մինչ այն մոմենտը, յերբ խրճիթում կվառվի ելեկտրականու-թյունը»:

Գրութեշովակ դալառի մի ուրիշ գյուղացի գրում ե.

«Ֆարբիկային ապրանքներ մենք ներկայումս բոլոր-վին չենք գնում: Մեր հազուատն ամբողջապես կարկատան-ներով և պատած: Կոշիկները մենք վերասարքում ենք, միելով փայտյա պողոչներ, ինչպիս անում եյինք համաշ-միելով փայտյա պողոչներ, ինչպիս անում եյինք համաշ-

մեծ ե, դժվար ե նույնիսկ թվել այն ամենը, ինչ անհրաժեշտ կլիներ գնել...

Գյուղացին հարկադրված ե հետ վերադառնալ դեպի նախապատմական ժամանակները, հաղնել վուշից և կանեփից իր ձեռքով պատրաստած հաղուստ և լինել դերձակ ու կոչկակար։ Զիոլ մենք կտրում—անցնում ենք 200 և ամելի կիլոմետր, վորովհետև մեղ համար յերկաթուղին անմատչելի յե։

Իսկ ահա թե ինչ է գրում լվովի վոյելոդության ժեղվակի դաշտակի սակալահող մի գյուղացի։

«Մինչև 1932 թ., չնայած կրիզիսին, յես մի կերպ դիմանում եի։ Բայց հիմա յես արդեն հասել եմ լիակատար հուսահատության։ Սպառվել են բոլոր խնայողությունները։ Մենք նետված ենք աղքատության ամենախոր հատակը։ Խրճիթում մութն ե, գյուղացու հոգու մեջ ել մութն ե, վորովհետև վոչ մի տեղից նա փրկություն չի սպասում։ Ի՞նչ կարող եմ ասել յես իմ մասին, իմ ասպարայի մասին։ Հենց նրա մասին մտածելը ինձ ցալ ե պատճառում, դրա համար ել ամելի լավ ե չմտածել։ Ցուրտ ե, կոչիկ չկա, տաք հաղուստ չկա՝ վոչ ինձ և վոչ ել յերեխաներիս համար։ Խրճիթը փուլ ե զալիս, ջրհորը քանդվել ե, տեղ չկա ջուր վերցնելու։ Այդ բոլորի համար փող վո՞րտեղից վերցնել։»

Տարնոպոլի վոյելոդության բուչացի դաշտուի գյուղին այսպես ե նկարագրում իր ամենորյա տառապանքները։

«Տնտեսությունը—դա դյուղացու արհեստանոցն ե, վորը այժմ դարձել ե բեռ, վորովհետև ծախսերն ամելի շատ են, քան յեկամուսները։ Իսկ ի՞նչ ե տեղի ունենում սակավահող դյուղացու տնտեսության հետ։ Չնայած բոլոր շանքերին, ամբողջ աշխատանքին, այն անկման մեջ ե։

Վաղ թե ուշ գյուղացին անպայմանորեն պետք ե տընտեսական շենքեր կառուցի։ Դրամի պակասության պատճառով նա այդ շենքերը կառուցում ե վատ և վոչ հաստատուն։ Դեռ մեկը չկառուցած, մյուսն արդեն փլվում ե... Գոմերի և փարախների հատակը հաճախ փչանում ե, իսկ չե՞ վոր չի կարելի թույլ տալ, վոր անասունը ցեխի պատ-

ճառով փչանու։ Մինչդեռ վոչ միայն տախտակ, այլև մեխեր գնելու համար դրամ չկա։ Անասունները բազմացնել անհնարին ե, չբազմացնել—ավելի՛ վատ։ Խրճիթների հատակները սովորաբար հողից են և վոչ թե տախտակից։ Նեխած ու խոնավ ե, գոմերն ել այդպիսին են, իսկ ամբարները հաճախ առանց պատերի յեն, վորովհետև փող չկա չենարարական մատերիալ գնելու համար... Շները բներ չունեն, չունեն ամսոս ե, բայց ինչ արած։ Վորորմելի արտաքնոցը տախտակից եր, այժմ նա դարձանից ե, իսկ այդ տախտակներից սեղան պատրաստեցինք, հետո այդ սեղանից փարախի դռներ, վոր վերջը խոզը կրծուեց։ Յեկ կը կին պետք են սեղանն ու դռները, հարկավոր ե փող պարտք վերցնել և զնել, վորովհետև խոզը փարախից դուրս ե գալիս։ Ամբողջ տնտեսությունն ունի միայն մեկ վեդրուվ։ Այդ վեդրոյով ջուր ես կրում խոհանոց, ջրում ես ձիուն ու կովին, հենց նույն վեդրոյի մեջ ել խոզերին կեր ես տանում, նույն վեդրոյով ել ընտանիքի համար ջրհորից ջալը ես հանում։ Այլտեղ փտում ե և գութանը ժանդուռում ե անձրևի տակ, վորեւե տեղ չկա նրանց համար—սարայ չկա, իսկ այն կառուցելու ել փող չկա։ Խոզի համար հարկավոր ե կեր պատրաստել, պատրաստելու աման չկա։ Ստիպված ես պատրաստել նույն այն ամանի և պուտուկների մեջ, վորոնց մեջ կերակուր ես պատրաստում քեզ համար։

Իմ լուսամուտի ապակինները ջարդված են, նույնը նաև դոմումն ե։ Շա՛տ ցուլս կբերի քամին, մինչև վոր յես ապակի կձարեմ։

Այդպիսի զանազան մասերից ե կուտակվում կարիքը։ Յեղբակացության մեջ գյուղացին հայտարարում ե։

«Մա մի մեղք ե, վոր յերեկիքի հանդեպ վրիժառություն ե աղաղակում։ Հացը լիսուատ ե, իսկ մենք, վյուղացիները—կիսաքաղց ենք, իսկ կան նաև բոլորովին քաղցածներ։ Ենաստանում հագուստը, կոչիկը և վատերիքը շատ ե, իսկ մենք մըսում ենք, և մեզ կրծուում ե կարիքը։ Մենք խոնավ խրճիթներում կիսամերկ դողում ենք ցրակից։ Մեզ զրիցըը ե աշխատանքը, վորը մենք մի ժամանակ սիրել ենք մեր կյանքից ավելի։

Բնությունը, վորը մշտապես մեզ վողջունել ե արեա-

ծաղի հետ, հիմա այլևս մեղ չի ժապում: Այլևս կյանք չկա, հույսը հանդել ե:

Այսպես եր ուկրաինական գյուղը պանական Լեհաստանում: Զքավրական ու միջակային գյուղացիական տնտեսությունը աղքատամում եր, գյուղական բնակչությունը քաղցում եր:

Մշտական թերասնումը, ցուրտն ու սովոր հասցրին ֆիզիկական ուժառապության և հիմանդրությունների աճման: Արևմտյան Ուկրաինայի գյուղերում մոլեզնում և տուքերկուլովը: Համաձարակիները տանում են մարդկային հաղարարության կրանքեր: Լեհական գաղութարանները գյուղը համարյա թե թողել ելին առանց բժշկական վորևե ողնության: Արևմտյան Ուկրաինայում 9 հազ. բնակչին մի բժիշկ և ընկենում: Բժշկական ողնությունը միանդամայն անմատչելի յե գյուղացիներին:

Ահա թե ինչ եր դրում 1938 թ. սկզբին «РоботНИК» թերթը.

«Գյուղում, իրեւ կանոն, վոչ վոք չի բժշկվում: Գյուղացիները կարիքի պատճառով զրկված են բժշկին դիմելու հնարավորությունից, մանավանդ վոր բժիշկը հեռու յե ապրում: Նրա մոտ ընկնելու համար հարկադրված ես ձիեր վարձել: Բացի դրանից վստահ չես, մոր բժիշկը կհամաձայնի դալ այդքան հեռու: Յեթե նույնիսկ գյուղացին բժիշկ հրավիրի, ապա նա դրամ չունի զեղորայք զնելու: Զքավոր և նույնիսկ միջակ գյուղացիների համար այդ գժվարություններն անհաղթահարելի յեն: Ծննդկան կանաց ողնությունը բոլորովին ցույց չի տրվում, մինչդեռ այն չափազանց անհրաժեշտ ե, վորովհետեւ նրանց մեծ մասը հյուծնած, առողջությամբ թույլ կանայք են, վորոնք մանկության ժամանակ ուսիսիտ են ունեցել: Այստեղից եւ մահով վերջացած ծննդաբերությունների քանակի հակայական աճում: Գյուղը միանդամայն անողնական և այդ չարեցի հանդեպ, վորը աղքատության հետևանք և հանդիսանում:

Առանձնապես սարսափելի յե յերեխաների գրությունը: Յերեխաները գյուղում մնում են առանց վորևե հոկության: Վաղ հասակից նրանք հարկադրված են զբաղվել

Փիղիկական աշխատանքով: Դարրոց հաճախում ե յերեխաների միայն փոքրիկ տոկոսը: Հազարալոր յերեխաներ ստիպված են տանը նոտել, վորովհետեւ հաղուստ չունեն գոլոց զնալու համար: Մնդում են նողկալի կերպով: Հիվանդություններն ու մահացությունը յերեխաների մեջ հսկայական ե: Գալիցիայում յերեխաների յերեք քառորդ մասը հիվանդ և թոքախոռվ և ռախիտով:

«Յերեխաները, —գրում ե Վաղովիցկի գավառի մի գյուղացի, —ման են զալիս ուռած վորերով, ունեն ծուռ վառքեր և լուցկու նման բարակ ձեռքեր»:

Հուսահատությունը, անելանելի կարիքը ստիպում ե Պուլավկի գավառի գյուղացուն գրել.

«Կյանքն աստիճանաբար մտհանում ե, մարդկի չեն ամուսնանում, ընկնում ե ծննդաբերությունը, դե ել ինչո՞ւ համար ե, խիստակես, գյուղացին աշխարհ զալիս, յեթէ, միենույն ե, նա աշխարհում վոչինչ լավ բան չի տեսնելու»:

Վորքան ավելի ուժեղ եր գառնում՝ լիհական պաների ճնշումը, այնքան ավելի վորոշակիորեն եր սկսում ըմբռնել ուկրաինական գյուղացին հողի և աղղային աղատության համար պայքարելու անհրաժեշտությունը: Նա դիտեր, վոր համարյա իր կողքին—տահմանի այն կողմում—աղատու ու ունեոր են աղջում նրա արյունակից յեղբայրները, վորոնք ժողովուրդների մեծ և իմաստուն առաջնորդներ լենինի ու Ստալինի ղեկավարությամբ տապալել են կարգածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և առմիջա վոչնչացրել են շահագործումը և ազգային ճնշումը:

Գյուղացիները կարմածատիրական ճնշման դեմ տարբեր միջոցներով ելին պայքար մղում: Նրանք դիմադրություն ելին ցույց տալիս հարկահամարվածներին, դատական կատարածուներին, հարձակվում ելին կարմածատիրական աների վրա, կտրում ելին կարմածատիրական անտառները, կազմակերպում ելին քաղցածների ցույցեր, կոպում ելին վաստիկանության դեմ: 1921—1923 թ. թ. գյուղացիների այդ կարգի յելույթներ տեղի ունեցան ամբողջ Արևմտյան

Աւկրաինայում : 1924—1925 թ. թ. գյուղացիական յելույթ-ների ալիքը ծավալվեց Վոլինում : Սկզբում՝ ուկրաինական գյուղացիության անջատա-անջատ յելույթները համաշխարհային տնտեսական կրթիւնի տարիներին դառնում են ավելի ու ավելի կազմակերպված, ընդարձակ, մարտական, ընդունում են գյուղացիական խսկական ապատամբությունների բնույթ :

1932—1933 թ. թ. Միջին Գալիցիայում տեղի ունեցած գյուղացիական ապատամբությունն ընդգրկեց ամբողջ գյուղեր ու գավառներ և անցավ Արևմտյան Ուկրաինայի սահմաններից չատ հեռու : Ապատամբության մզիչ հանդիսացավ գյուղացիության վրա հարկացին ձեռշման ուժեղացումը, վոր ձեռնարկել եր կառավարությունը : Բողոքի մասսայական չարժումը մի շարք վայրերում վերաձեց գյուղացիների լուրջ ընդհարումների վոստիկանության և զորքերի հետ : Արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Լիսկոյի, Լապանովոյի, Յաղոլոյի, Լիմանովոյի և Աստոշինոյի սայրներում : Լիսկոյի սայրնում ժանդարմերիայի դեմ ուղղված մարտերին մասնակցություն ունեցան 19 գյուղեր 10 հազ. մականությամբ : Գյուղացիների սրայքարն ամենաբարձր լարվածության հասավ 1933 թ. կեսերին : Ամբողջ Միջին Գալիցիան ընդգրկված եր ապատամբությամբ : Լիսկովի և Կրակովի վոյելուղությունների գավառներում 100 հազար գյուղացիների՝ ժանդարմերիայի և զորքերի (ապատամբների դեմ զործի եյին դրել ավելացիան ու տանկերը) դեմ ուղղված մարտերը շարունակվեցին մի ամբողջ ամիս : Մի քանի տասնյակ գյուղացիներ սպանվեցին : Գրաբիններում ժանդարմերիայի հետ ընդհարվելու ժամանակ սպանվեցին 2 գյուղացի և վիրավորվեցին յերկուուր : Յասլոնկում 5 հազար գյուղացիներ ուղելորդեցին հատերու կալվածատիրական սննդառը, տեղի ունեցավ զինված ընդհարում վոստիկանության հետ, վորի ժամանակ սպանվեցին ու վիրավորվեցին 25 մարդ, այդ թվում նաև վոստիկաններ : Լանցուտովի զավառում գյուղացիներն անցան կալվածատիրական կարգածքների զրաքանուը : Ապատամբությունը ձեռնու համար յեկած զինվորները հրամարվեցին գյուղացիների վրա կրակել : «Բունառովչչեկների» դեմ շարժեցին

գյուղատները փոխած սրաների և յենթասպանների զորամասեր : Զինված գոտեմարտում սպանվեցին 50 մարդ :

Գալիցիական գյուղացիների հերոսական յելույթը դաժանորեն ձնվվեց : Պատճիչ եքսպելիցիաները շրջադաշեցին ամբողջ յերկրում, բայց գյուղացիական շարժումը չընդհատվեց :

1934—1936 թ. թ. ընթացքում Արևմտյան Ուկրաինայի տարրեր տեղեցում, հատկապես Վոլինում, տեղի ունեցան գյուղացիական գործադպուլներ և զինված ընդհարումներ՝ վոստիկանության հետ : Նորից հաճախակի եյին զարձել կալվածատիրական կալվածքների հրկիցման և զրավման զեպքերը, Բանվոր դասակարգի հզոր յելույթների (ղեպքերը լվովում և Կրակովում) աղբեցության տակ գյուղացիությունը վերստին պայքարի յերածրանում կալվածատերերի գագան կամայականության և ձնշման դեմ : Զամոյսկի և Գրուբեցովսկի գավառներում արյունալի ընդհարումներ են տեղի ունենում գյուղացիների և գոստիկանության միջև : Գայ գյուղում, Լվովի մոտերքը, 1500 ուկրաինական գյուղացիներ խանդարեցին իշխանություններին Փերման բաժանել լեհական կորոնիաների մի խմբի միջև : Ռավանիուսի զավառի Վուլիա-Մազլիշկայում ուկրաինացի գյուղացիների ամբոխը մարտի մտավ վոստիկանության հետ, վորն ուղում եր խլել այն արոտավայրերը, վորտեղ գյուղացիներն արածացնում եյին իրենց անասուններին :

1937 թիվն անցավ գյուղացիական համընդհանուր զործադպուի նշանաբանի տակ, զործադպուլ, վորն ընդգրկել եր ամբողջ Լեհաստանը : Ուկրաինական գյուղացիության 90 % -ը մասնակցություն ունեցավ այդ զործադպուին : Յեկ այս անգամ ել Արևմտյան Ուկրաինան դառնում և ժանդարմերիայի և զորքերի հետ գյուղացիների ունեցած արյունալի ընդհարման թատերաբեմ : Լվովի և Կրակովի վոյելուղություններում պատճիչ եքսպելիցիաները սպանեցին 41 գյուղացու, վիրավորեցին հարյուրավորների :

Ուկրաինական գյուղացիության մեջ տեղի ունեցող մշտական ալեկործումները ուժեղ կերպով անհանգստացրին լիհական կառավարությանը : Ամենազագանային տեռորով, ազգային կրկնապատկված ձնշմամբ եր պատասխանում նա

քաղցի ողակից, կալվածատիրական ստրկությունից և շառագործումից դուրս գալու ուկրաինական գյուղացիության փորձերին:

ՊԱՆԱԿԱՆ ԼԵՀԱՍՏԱՆԸ—ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆԵՐԻ ԲԱՆՏ

Լեհական պետությունը ժողովուրդների խոկական բանտեր, ուկրաինացի միլիոնալոր մասսաների համար դահիճ, ուկրաինացիներ, վորոնք գտնալեցին մեր արեւտյան սահմանի այն կողմում: Պետական բռնության ամբողջ արարատու ուղղված եր այն բանին, վորպեսզի ուկրաինացիներին վերածեր լեհական պաների գաղութային սորուկների, այնպիսի ստրուկների, վորոնք կորցրած լինելին իրենց աղդային դեմքը, մոռացած լինելին իրենց հարազատ լեզուն:

Բոնությամբ լեհացնելը, աղջային կուլտուրան քայլացելը, ուկրաինական կուլտուրական հիմնարկների լիկվիդացիան, աղջային ինքնաղիտակցության ամեն մի արտահայտությունը և պանական բարբարոսական ունեմի գեմ ունեցած դժգոհությունը հրով ու սրով ճնշելը—այս եր լեհական պաների գործողությունների ծրագիրը:

Ուկրաինացիները լեհաստափում «ցածր ռասա» եյին, լիովին իրավազուրկ: Ուկրաինացիներին արգելված եր վարչական ապարատի բոլոր ողակների մուտքը, նրանք անդամ դրկված եյին սոլյատի գյուղական ավագի պաշտոնն զրավելու իրավունքից: Ուկրաինական գյուղի բախտի այդ տնօրինողը դերազանցորին հավաքադրվում եր լեհական նորարանակների և «ոստանիկների» միջից:

Ուկրաինական լեհուն որենքից դուրս եր հայտարարված: Կառավարական բոլոր այն հիմնարկություններում, դատարանում, փոստում, յերկաթուղում, վորոնք գտնվում եյին Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայի վրա, թույլատրված եր միայն լեհական լեզուն: Ուկրաինական ընակչության զղալի շերտերը, այդ թվում նաև մինչև 25 տարեկան հասակի յերիտասարդությունը, համաձայն վերջին սահմանադրության, զրկված եյին ընտրական իրավունքներից: Միայն ուկրաինացիների աննշան փոքրամասնությունը իրավունք ուներ մասնակցել սեյմի և տեղական ինքնա-

գարությունների ընտրություններին: Ժողովները, ցույցերը, ուկրաինական ժողովրդի գործիչների հրապարակային յելոյթներն արգելված եյին: Ամեն տեսակի մեքենայություններով, բացահայտ տեսորով, ընտրական ցուցակներն անվալեր համարելով, առաջարկված թեկնածուների ձերբակալություններով լեհական իշխանություններն ընտրությունների ժամանակական ընակչությանը թույլ չելին տալիս բացահայտ կերպով արտահայտելու իր կամքը: Արևմտյան Ուկրաինայի խոշորագույն կենտրոնում՝ Լվովում, վորը ուկրաինական ընակչությամբ մեծամասնություն ունեցող քաղաք է, քաղաքային խորհրդի վերջին ընտրությունների ժամանակ ընտրվեց 64 լեհացի և վոչ մի ուկրաինացի: Այն մասին, թե սովորաբար ինչպես եյին տեղի ունենում տեղական ինքնաշխատությունների ընտրությունները, պատմում է կասսկի գալատի մի գյուղացի:

«Մեզ մոռ գյուղում տեղի եյին ունենում գյուղական ռագայի ընտրությունները: Բայց, ըստ եյության առած, վոչ վոչ վոչ վոչ չեր ընտրում, այլ պարզապես ավագը իր հետ ցուցակը բերեց, հրամայեց բոլորին ստորագրել—և վերջ»:

Ուկրաինական գյուղում դործում եր լրտեսների և պրովինատորների հսկայական ցանց, լրտեսներ ու պրովինատորներ, վորոնք խցկվում եյին աղջային տարբեր կազմակերպությունների շարքերը: Դեմոկրատական աղջային կազմակերպությունները, պրոֆմիությունները, ինտելիգենցիայի միավորումը Արևմտյան Ուկրաինայում ամեն կերպ հետապնդվում եյին, նրանց գործիչները ձերբակալվում, գանձակոծման եյին յենթարկվում, զնդակահարվում եյին: Հենց վերջերս լեհական իշխանությունները արգելեցին ուկրաինական «Պրօսվիտա» կուլտուր-լուսավորական կազմակերպությունը և «СОКОЛ» սովորացին միավորումը:

Ուկրաինական բանվորների համար արդյունաբերական խոչը, հատկապես ուղարկական ձեռնարկությունների մուտքը փակ-եր: Գործարան ընդունվելու համար ուկրաինական բանվորը պետք է ունենար վաստիկանության վկայությունը բարեհուսության մասին:

Բանակում ուկրաինացիներն իրավունք չունեյին հրաժանաւարական պաշտոններ գրավելու: Ապիկար և սնապարծ սպայությունը, վորը հավաքագրվում եր լեհական կալվածատերերի և կուլակների զավակներից, սիստեմատիկաբար ծաղրում եր ուկրաինական զինվորին, հարյուրավոր «անհնազանդ» զինվորներ ձերբակալվում և դատվում ելին ուղղմաղաշտային դատարանով:

Լեհական զավութարանները ուկրաինական ազգային կուլտուրայի խսկական ջարդ սարքեցին: Քանի տարի առաջ Սրբամտյան Ուկրաինայի տերիտորիայի վրա կար 3600 ուկրաինական դպրոց: 1934—1935 թ. թ., պաշտոնական տվյալներով, մնացել եր 457 դպրոց, ըստվորում այլ դպրոցներում աշխարհագրության և պատմության, իսկ յերեմնելու ուրիշ առարկաների դասավանդումը տարվում եր միայն լեհական լեզվով: Վերջին տարիներում ուկրաինական դրայրոցների թիվը կրճատվեց մինչև 200-ի: 1919 թ. Վոլինում հաշվում եր ուկրաինական 1050 դպրոց, իսկ ներկայումս միայն 5-ը: Գալիցիայում յերեխաների 5%-ն եր միայն մայրենի լեզվով սովորում, իսկ Վոլինում՝ 0,02%-ը: Լեհաստանում գոյություն ունեցող 770 միջնակարգ դպրոցների ընդհանուր թվից միայն 26 դպրոց ե ուկրաինական: 743 պրոֆեսիոնիկական դպրոցներից միայն 7-ն ե ուկրաինական: Լեհաստանում ուկրաինական վոչ մի համալսարան չկար:

Այդպիսի քաղաքականության հետեանքով ուկրաինական բնակչությունը մատնված եր անզրագիտության, վայրենության և հետամնացության: Լեհաստանում 23%-ն անդրագետներ եյին, իսկ Սրբամտյան Ուկրաինայի առանձին վոյնվորություններում՝ մինչև 60%-ը, հարավային Պոլեսյյում անդրագետների քանակը հասնում եր մինչև 70%-ի:

Հալածանքի յեր յենթարկվում վոչ միայն դպրոցը, այլ նաև դրականությունը, թատրոնը, մամուլը: Լեհաստանում լույս եր տեսնում պարբերական դանազան 1860 հրաժարակություն, նրանցից ուկրաինական եր ընդամենը 40-ը, և այն ել առավելապես կրոնական: Ուկրաինական բնորդերթերերի տիրածը կազմում եր 7 հազար որինակ: Լփովի ուկրաինական միակ թատրոնը իշխանությունները փակե-

ցին 1927 թ. «մինչև հատուկ կարգադրություն», և այլև չբացվեց: 20 տարվա ընթացքում լեհաստանում ուկրաինական լեզվով հրատարակված գրքերը կարելի յե տառացիորեն մատների վրա հաշվել:

Ուկրաինական ինտելիգենցիայի դրությունը բացառապես ծանր եր: Հարատև դործագրկություն, նվաստացումներ և հետապնդումներ—այս եր Սրբամտյան Ուկրաինայի ուսուցչների, փաստաբանների, բժիշկների, նկարիչների և յերաժիշտների վիճակը:

Ավելի լավ չեր նաև Սրբամտյան Ուկրաինայի քաղաքներում և ավաններում ապրող հրեա աշխատավոր ընակչության դրությունը:

Անտիսեմիտիզմը (հրեաներին հայածելը) լեհական կառավարության պաշտոնական քաղաքականությունն եր: Կրիզիսի հետեանքով քայլայլող հրեական չքավորության լայն մասսաները մուտք չունեյին վոչ արտադրության, վոչ ել զյուղատնտեսության մեջ: Վոքրիկ ավաններում կիոված, նրանք գատարարտիւած եյին այլասերման: Ժամանակ տամանակ լեհական բնակալները հրեական ջարդեր եյին սարքում, կողովագում և սպանում եյին հրեաներին, վոչնչացնում եյին նրանց գույքը: Կարմիր Բանակի ներս մտնելու նախորյակին Սրբամտյան Ուկրաինայի քաղաքներում և ավաններում ծավալվեց արյունալի ջարդերի ալիքը:

Լեհական դադութարարների «ազգային քաղաքականությունը» ուղեկիվում եր ամենավայրագ տեսորի սանձարձակությամբ: Լեհական բոնացողների ուժիմից դժուն լինելու վոքրագույն արտահայտությունն իսկ ճնշվում եր գաղանաբար: Ժամանակ պա ժամանակ ուկրաինական դյուդերն եյին ուղարկվում պատճիչ ջոկատներ, վորոնք անց եյին կացնում այսպես կոչված «ապացիֆիկացիան», այսինքն «խաղաղացումը»: Խաղաղացողների սանձարձակ հորդաները ունառում եյին ուկրաինական դյուդերովը մեկ, սարսափ զցելով բնակչության մեջ: Նրանք ծեծում և զանակոծում եյին բոլորին՝ չխնայելով վոչ յերեխաներին, վոչ ծերերին: Նրանք կողովագում եյին չքավորների աղքատիկ կահ-

Հարասիքը, քանդում և հրկիզում եյին նրանց տնակները, հողի յերեսից սրբում եյին ամբողջ գյուղեր :

«Պացիֆիկատորները» սովորաբար դործում եյին այսպես. զինվորների ջոկատը գրավում և այն գյուղը, վորը կասկածվում եր «կոմունիզմին համակրելու» մեջ: Բոլոր բնակիչներին քշում եյին հրապարակ: Պատժիչ ջոկատի հրամանատարը հայտաբարում եր, վոր յեթե «կոմունիստական ալիտատորին» չհանձնեն, ապա ամբողջ գյուղը կտուժի: «Մտածելու» համար տրվում եր մեկ ժամ: Այդժամկետը լրանալուց հետո բանուարկվում եր յուրաքանչյուր հինգ մարդուց մեկը: Բանուարկվածներին դաժանուրեն ծեծում և ուղեկցում եյին մոտակա բանութ: Այնուհետև սկսվում եր գյուղի ամբողջ բնակչության մարակահարումը: Ծեծում եյին հրացանի կոթիռով, վանակոծում եյին ուղղվեներով, մարակներով, նաղայկաներով, լոմերով ջախջախում եյին գանգերը, ձեռքերը, վստքերը, կողուղըները, ծեծում եյին մինչեւ դիտակցությունը կորցնելու աստիճան: Ծեծվածներին սովորում եյին հող կուլ տալ և աղաղակել՝ «սա յեհական սրբազն հողն ե»: Հարկադրում եյին համբուրել ուղանական սապողները, հայրերին ստիպում եյին ծեծել իրենց վորդիներին, վորդիներին՝ մարակահարել մայրերին և քույրերին:

«Պացիֆիկացիայի» եպիփողներից մեկը նկարագրում է ամերիկական հայտնի հրապարակախոս Ջոն Սպիվակը, վորը շրջագայել և Արևմայան Ռեկրանան:

«Մարսակելի փաստ տեղի ունեցավ կոլկի գյուղում:

Տեղական իշխանությունները «խավար ժողովրդին» խոսացել եյին ձրի պարոց հիմնել մայրենի լեռվով: Բայց դպրոցները չեյին կառուցում և չեյին մտածում կառուցել:

Գյուղացիները մի քանի անգամ պատվիրակներ ուղարկեցին վոյելության դիմավոր քաղաքը, պահանջելով կառարել տրված խոսությը:

Մայիսի մեկի որը կազմակերպած ցույցը անցավ դըպրոցի համար պայքարելու նշանաբանի տակ: 22-ամյա կոմունիստուհին, տեղական ուսուցչուհին, ցուցաբարներին տարավ դեպի կոլկի գյուղը: Գյուղացիները տանում եյին կարմիր դրոշակ: «Մեր յերեխաներին դպրոց ովեք» մակա-

դրությամբ: Ցույցին յեկան հայրեան գյուղացիներից շատ բնակիչներ, վորոնց մեջ կային կանայք, անչափահասներ և դպրոցական հասակի յերկան յերեխաներ: Ցույցարարների տրամադրությունը շատ խաղաղ էր: Ծիծաղում, կատակում եյին:

Յերբ յերթը մոտեցավ կոլկի գյուղին, նրանց գիմավորեց ստրամիկների մի խումբ: Ցույցը կանգ առաջ:

— Ու՞ր եք զնում:

— Գյուղ: Ուզում ենք սպահանջել մայրենի լեռվով ձրի դպրոց, — բոլորի փոխարեն սբատասխանեց ուսուցչուհին...»

Ավագ վոստիկանը բղավեց. «Յրվեց՝ք, թե չե վաս կլինի», — և կանգնեց ճանապարհի մեջտեղում:

— Մեղ դպրոց են խոսացել, և մենք այն կստանանք, — բացականչեց ուսուցչուհին: Բոնելով գրոշակը, նա առաջ շարժվեց: Վոստիկանական վերակացուն ապահեց նրան: Ամբոխը ալմիկեց: Սկսվեց տուրուղմբոց: Զայրացած մուժիկները կարգին ջարգություր արին ստրամիկների կողերը, և նրանք թափով փախան:

Ամբոխը շարունակեց իր ճանապարհը: Առաջվա նման առջևից գնում եր ուսուցչուհին, առնելով կարմիր գրոշակը: Առաջին շարքերում յերեխաներն եյին:

Ճանապարհին յերեաց զիմաների մի ջոկատ:

Ցենթրակիլով սպայի հրամանին, ամբոխը կանգ առաջ: Ուսուցչուհին շուռ յեկավ դեպի գյուղացիները և բղավեց:

— Յեկեք յերգենք մեր մարտական յերգը:

Գլխից վեր բարձր պահելով գրոշակը, նա զիւ ձայնով յերգեց. «Յեկիր, ում կյանքը անիծել ե...»: Սկզբում յերեխաներն արձականդիցին հիմնին, իսկ հետո նրանց հետեւից նաև զյուղացիները:

Գնդացրի տրաքոց... Յերգն ընդհատվեց: Լսվեցին առաղակներ ու հառաչանքներ: 19 մարդ սպանվեց. սպանվածների մեջ եյին ուսուցչուհին ու 12 յերեխաներ»:

1930 թ. գյուղացիական հոգումների ալիքից հետո «պացիֆիկատորները» Արեմայան Ռեկրանայում արյան բաղնիք սարքեցին: 800 զյուղեր հրկիվեցին: Բանդիտները քարուքանդ եյին անում ու հրկիզում ուկրաինական հա-

սարակական կազմակերպությունների շենքերը, գլոբոցները, ընթերցարանները, կոռոպերատիվները։ Գյուղերում ու քաղաքներում ձերբակալում եյին բոլորին՝ քիչ թե շատ «կանաչելիներին»։ Հարյուրավոր մտրակահար յեղածներ, մինչև մայը ծեծվածներ, տանջանքների, բռնաբարության յենթարկվածներ, հազարավոր ձերբակալվածներ—այս եր մինիստր Սլավոյ-Մկլավովսկու «պացիֆիկատորական» կամպանիայի արդյունքը։

Տասնյակ-հազարավոր ուկրաինացիներ՝ բանվորներ ու գյուղացիներ տանջվում եյին պանական լեհաստանի բանտերում և զնդաններում։ Ուկրաինական ժողովրդի լավագույն դավակեներին չարչարում, ծեծում եյին այդ զնդաններում։ Ամրող աշխարհում ազմուկ հանեց 1930 թ. լուց կում տեղի ունեցած քաղաքական խոշոր դատավարությունը, վորք լեհական բանտերում տիրող ուժիմի մասին ճշգնարարությունը յերեան հանեց։ Ահա թե ինչ եյին պատմում մեղադրյալներն այդ դատավարության ժամանակ։

Բանվոր Շ.

«Ինձ զդայեցին, բերանս փակեցին, վոտքերիցս սապոդները հանցին։ Քննիչը նստեց իմ զիլի վրա ու սկսեց հարվածել։ Միաժամանակ ժանդարմը ունետին դավազանով հարվածում էր իմ կրունկներին։ Թա՛ քանի հարված յես տացա և ինչքան ժամանակ ինձ ծեծեցին, դժվար ե ասել։ Կարող ե ուստահել, 80, կարող ե և 100 հարված... Այդ սպանդանոցը յես իմիմակի չեմ նկարագրելու։»

Բանվորուհի Պ.

«Եռյեմբերի 15-ին ինձ ձերբակալեցին լվովում և տեղափոխեցին լուցկ։ Այստեղ ինձ և մնացած մեղադրյալներին, վորոնց ծեծելուն յես ևս ներկա եյի, սկսեցին վայրենաբար տանջել։ Քննիչը թելադրեց ինձ իմ ցուցմունքները, վորոնք յես չեյի կարող ընդունել, վորովհետեւ այդ ցուցմունքներն իրականությանը չեյին համապատասխանում։ Այն ժամանակ նա ինձ ասաց, վոր ինձ հետ կիսուի լուցկյան սիստեմով։ յիթե նա ցանկանա, ապա յես կընդունեմ նույնիսկ այն, վոր «յես սպանել եմ իրեն»։ Ինձ յերկրորդ անդամ կանչեցին, զդայեցին և շատ ցինիկաբար տանջեցին։ Չեմ պատմի, վորովհետեւ ամաչում եմ։ Պատաստեցին իմ

ամբողջ հագուստը։ Յերբ յես դիտակցությունս կորցնում եյի, կանգ եյին առնում, յերբ ուշքի եյի դալիս, ծեծը կրկնում եյին։ Յերեք անդամ ինձ հարցաքննության կանչեցին, հարվածում եյին ուստինե դավազանով կրունկներիս, գլուխս ծակոտում եյին քորոշներով։ Մի որ ինձ ծեծեցին, բայց ստիպեցին ներկա լինել ուրիշների ծեծին։ Ծեծը տեղեց մոտ մեկ ամիս։ Յես սկսեցի արյուն թքել։ Յես գեռ մինչև հիմա ել հիմանդ եմ։ Բոյկոն¹ սպանվեց։ Յես լսեցի նրա վոշմարդկային աղազակները։ «Սպանեցեք ինձ»։ Զգացվում եր այրված մարմնի հոտ։ Լուսաղեմին այդ աղազակները լուցին։»

Մի ուրիշ բանվորուհի, Ա.

«Ինձ ձերբակալեցին 1930 թ. գեկտեմբերի 18-ին լվովում։ Գիշերն ինձ տարան լուցկ։ Առաջին որը ինձ վոտքեցը շլթայեցին սեղանին։ Այդպիսի գրության մեջ ինձ պահանջին մի որ ու գիշերվա կեսը։ Յերկու որ ինձ ուտելու բան չտվին։ Մի քանի որից հետո ինձ անդամությունը ընդհանուր կամերան։ Այնտեղ յես տեսա մյուս խոշտանդվածներին։ Մի քանի որից հետո ինձ տարան առաջին «հարցաքննության»։»

Սենյակը լեփ-լեցուն եր վստիկանության գործակաւներով։ Հարցեր եյին տալիս, վորոնց յես պատասխանեցի բացասաբար։ Շպրում եյին ծաղրական նկատողություններ։ Հրաման արվեց։ «Հդայել և ջուր տալ»։ Ինձ զդայեցին և սկսեցին քթիս միջով ջուր լցնել։ Առաջին անդամ լցրին հինգ լիտր։ Յես խեղզվում եյի, բայց վոչինչ շասցի։ Լցրին զարձյալ հինգ լիտր։ Բայց «հարցաքննությունը» մնաց անարդյունք։ Նույն այդ զիշերը, ժամը 10-ին, ինձ նորից «հարցաքննության» կանչեցին։ Քննիչի հարցերին յես չեյի պատասխանում։ Նա սպանաց և ասաց, վոր այս սենյակից վոչ վեռ դուրս չի յեկել առանց ցուցմունք տալու։ Նա հրամայեց ինձ՝ հանել հագուստ։ Յերբ յես հրամարեցի, պատուց իմ հագուստը և զդայեց։ Մըրիչով կապեց իմ աշքերը, ողնության կանչեց ժանդարմին։ Նրանք ինձ բարձրացրին և զրին սեղանի վրա։ Քննիչը

1 Մեղադրյալներից մեկը։

բոնարարեց ինձ՝ ինչպես դադան։ Դրանից հետո նա ինձ արձակեց և 10 ժամ ժամանակ տվեց մտածելու համար։ Մի քանի որից հետո յես ուժեղ չերմախոս ստացա»։

Լեհական բանակալները այսպես ելին դատաստան տեսնում ուկրաինական հեղափոխականների հետ, վորոնք արիարար սպայքարում ելին Արևմտյան Ռեկրանայի և ամբողջ լեհաստանի ժողովուրդների ազատազրության համար։

Այս եր լեհական պանդահիճների «ազգային քաղաքականությունը»։

Նույնիսկ անգլիական ու ֆրանսական մամուլի ականավոր որդաններն իր ժամանակին զայրույթ են արտահայտել այդ քաղաքականության հանդեպ։ 1939 թ. փետրվարի 4-ին Լոնդոնի «Եկոնոմիստ» ժուռնալը գրում եր.

«Լեհերն սկզբում խոստացան ուկրաինական պրովինցիաներին ավտոնոմիա տալ, բայց իրականում յերբեք ել չեն մտածել իրենց խոստումը կատարելու մասին։

Ինդհակառակը, նրանք ամեն կերպ նեղել և նեղում են ուկրաինական ազգին։ Այն գիմադրությունը, վոր ցույց են տալիս ուկրաինացիները, լեհական իշխանությունների կողմէց ճնշվում և ամենայն գաժանությամբ։ 1930 թ. լեհական իշխանությունները ձեռնամուխ յեղան ուկրաինական բնակչության «խաղաղացմանը»։ Լեհական զորքերն անխղճարար գատաստան ելին տեսնում ուկրաինական գյուղացիների հետ։ Այժմ, ըստ յերեսությն, Յելլուսպայում չկամի ժողովուրդ, վորն այդպես դաժանորեն ճնշվեր, ինչպես լեհաստանում բնակլող ուկրաինացիներն են։

Անգլիական «Նյուո-Քրոնիլ» թերթը 1939 թ. մարտի 15-ին հրապարակեց իր սեփական թղթակից Ուինտերոննի հոգվածը, վորի մեջ վերջինը գրում եր.

«Լեհերը Արևմտյան Ռեկրանան դիտում են վորպես իրենց գաղութը։ Լեհական ուկրաինացիները յերազում են անցյալի լավագույն ժամանակների վերադարձի մասին և անհամբերությամբ սպասում են, թե յերբ վրա կհասնի լեհական տիրակալությունից իրենց փրկվելու որը»։

Տեռորով, ծեծերով, գնդահարություններով լեհական գաղութաբաններն ուղում ելին ուկրաինական ժողո-

վուրդը մունջ ստրուկների վերածել, խեղդել՝ դեպի աղաւագրությունն ունեցած նրա կամքը։ Զհաջողվեց։ 20 տարվա բանության միջով, լեհական ժանդարմների այրած դյուդերի մոխիների տակ, ուկրաինացիները կարողացան պահպանել իրենց ազգային ինքնագիտակցությունը, լեհական պաների լծից ազատագրվելու համար պայքարելու իրենց վճռականությունը։

ԴԵՊԻ ՆԱՐ ԿՅԱՆԻՑ

Լեհական պետության բժամիս և ապիկար զեկավարները յերկիրը գցեցին պատերազմի անդունդի մեջ։ Պաներեկամցից կեղեքող ժողովուրդները չուզեցին պաշտպանել պետությունը, վորն այդ ժողովուրդներին պահում եր ստրկության, քաղցի և ալքատության մեջ։ Լեհական բանակն անմարտունակ դուրս յեկալ, կառավարությունը դադարեց գոյություն ունենալուց, նեխման և փլուզման լաթային պետությունը քայլայլեց։

Արևմտյան Ռեկրանայի ժողովուրդը պաների կողմից թողնված եր բախտի քահաճույքին։ Քաղաքները մնացին առանց հացի, առանց լուսի։ Բնակչությունը քաղցում եր։ Ամբողջ Արևմտյան Ռեկրանայով անցավ ուկրաինական ու հրեական ջարդերի ալիքը։ Ռեկրանական տանջված դյուպացիությունը վոտքի յելալ իր ճնշողների դեմ։ Ստանիլավովի և Լուզի վոյեկոպություններում բոնկվեցին գյուղացիական ազստամբություններ։ Գյուղացիները գրավում ելին կարլածատիրական կալվածքները։ Պաները պատասխանցին նոր սեպեսիսխաներով, ջարդերով։

Այդպիսի իրադրության մեջ խորհրդային կառավարությունը աղնիվ և իմաստուն վորոշում ընդունեց՝ ոգնության ձեռք մեկնել մեր արյունակից յեղբայրներին՝ ուկրանիացիներին ու բելոռուսներին, վորոնք բնակվում են սպանական լեհաստանում։ «Խորհրդային կառավարությունից, —հայտարարեց ուղիղոյվ արտասահմած իր ճառում ընկեր Մոլոտովը, —չի կարելի նաև պահանջել անտարբեր վերաբերմունք դեպի արյունակից ուկրանացիների և բելոռուսների քայլացը, վորոնք ապրում են լեհաստանում և առաջ գտնութագրությունը»։

Նըլում եյին իրավազուրկ ազգերի վիճակում, իսկ այժմ ել բոլորին պատահմունքի կամքին են թողնված»: Խորհրդացին կառավարությունը, —ասաց այնուհետև ընկեր Մոլոսով, —«իր սրբազն պարտականությունը» համարեց «ոպնության ձեռք մեկնել իր յեղայր ուկարինացիներին և յեղայր ըելուուներին, փորոնք ապրում են իեհաստանում»:

Սեպտեմբերի 17-ին Կարմիր Բանակի զորքերի գլխավոր հրամանատարությանը հրաման տրվեց՝ «անցնել սահմանը և իրենց պաշտպանության տակ վերցնել Արևմտյան Ռէկրաֆինայի և Արևմտյան Բելուուսիայի բնակչության կյանքն ու գույքը»: Նույն որն իսկ Բանակորա-Գյուղական Կարմիր Բանակի փառապանծ զորամասերը մտան ատրկացված Արևմտյան Ռէկրաֆինայի տերիտորիան և ձեռնամուխ յեղան կուսակցության և կառավարության կողմից իրենց վրա գրված ազատազրական մեծ խնդրի կատարմանը:

Բնակչությունը մեր զորքերին ըրջապատում և համաժողովական սիրով, յերախտադիտությամբ և ջերմ չնորհապարտությամբ: Արևմտյան Ռէկրաֆինայի աշխատավորների բազմաթիվ ցույցերում ծածանվում են զրոշակները՝ «Կեցցեց Ստալինը», «Շնորհակալություն ընկեր Ստալինին» լոգունզներով: Արևմտյան Ռէկրաֆինայի քաղաքների, գյուղերի և ավանների բնակչությունը մարտիկների վրա ծաղիկներ եթափում, նրանց դիմավորում և աղ ու չացով, խղճուկ խճիթներում ունեցած ամեն լավ բանով: Կարմիր Բանակի զորամասերի մուտքը Արևմտյան Ռէկրաֆինայի գյուղերն ու քաղաքները վերածվում և համաժողովրդական տոնախմբության:

Ազատագրված Ռէկրաֆինան սկսեց ապրել նոր կյանքով: Քաղաքներում և այսաներում ստեղծված են Բանակորական գվարդիայի ջոկատներ, վորոնք ոգնում են Կարմիր Բանակին՝ լիկիվացիայի յենթարկելու թագնված սպայական բանդաներին: Կազմակերպված են քաղաքային ժամանակավոր վարչություններ, փորոնք արդեն ձեռնամուխ են յեղել կարգ հաստատելուն, կանգ առած ու քայլքայլած արդյունաբերությունը վերականգնելուն, քաղաքի բնակչության մատակարարությունը կազմակերպելու դործին: Արդեն ծխում

են տարիներով կանգնած գործարանների և Փաբրիկաների ծխնելույդները: Հազարավոր գործազուրկներ վերադառնում են դադոյացների մոտ: Գյուղերում ստեղծված են գյուղացիական կոմիտեներ: Կալվածատիրական հողերը, տները և ինվենտարը անցնում են գյուղացիների ձեռքը: Դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում սկսվում են կանոնավոր պարագմունքները: Առաջին անգամն են յերեխաները հնարավորություն ստանում սովորելու և առաջին անգամ՝ մայրենի լեզվով: Բացի են թատրոնները և կինոները: Յերեւան յեկան ուկրաինական լեզվով տասնյակ թերթեր: Բանակչությունն աղաճությամբ ծանոթանում են ԽՀԱՄ աշխատավորների գլուխյան հետ, ուսումնասիրում և Ստալինյան Սահմանադրությունը: Ամբողջ ձայնով մեկ հաջցին ուկրաինական ժողովրդի՝ մոտիկ անցյալում արգելված յերգերը:

«Правда»-յի թղթակիցն այսպես և նկարագրում էվոլյուցիանը Կարմիր Բանակի զորամասերի գալու առաջին որեւբնին:

«Բաղաքում նորմալ կյանքը վերականգնելու գժվարին խնդիրը գրված ե Կարմիր Բանակի ներկայացուցիչ ընկերությունի վրա: Լվովի բանալորները, ծառայողները, ինտելիցիանցիան՝ համոզված լինելով, վոր պատերազմի վերջը յեկել ե, ամեն կերպ ոգնում են քաղաքի կյանքին վերականգնությունը:

Լվովի նախկին վոյեվոդության շենքի մոտ անսովոր բազմություն կա: Ո՞վ ասես այստեղ չե: Կարելի յե հանդիպել գիտնականի, վորը յեկել ե զրուցելու կարևոր գործերի մասին, ինժեների, վորն իր ծառայությունն ե առաջարկում, բանվորի և բանվորների մի ամբողջ դեկտացիայի, վորոնք պատմում են գույքի պահեստների մասին: Այստեղ կարելի յե հանդիպել նաև գյուղերի ներկայացուցիչներին, վորոնք յեկել են կալվածատիրական տնտեսության հետ կապված հարցերը վճռելու, և առևտրականների, վորոնք ցանկանում են պարզել, թե կարող են արդյոք անցնել առևտրի:

Ամբողջ որն ընկեր: Միշենկոն ընդունում ե մարդկանց,

զրուցում և նրանց հետ։ Վոմանց պարզաբանում են, մյուս-
ներին հարցուփորձ և անում, հանձնաբարություններ տա-
լիս։

Նա նախ և առաջ մտահոգված և նրանով, վոր կարդի-
քերի պարենային ապրանքների առևտուրը։ Այն ընկերները,
վորոնց հանձնաբարված և կաղմակերպել հաց թխելու գոր-
ծը, զեկուցում են, թե քաղաքը ալյուրի և հացահատիկի
ինչպիսի պաշար ունի։ Պարզվում է մի հետաքրքրական ման-
րամասնություն։ Կիսապաշարված քաղաքն ուներ ալյուրի
յերկամսյա պաշար։ Բայց լեհական բանակի ապիկար հրա-
մանատարությունը քաղաքի բնակչությանը պահում եր-
խղճուկ աննղաբաժնով, չուղենալով կաղմակերպել հաց թխե-
լու գործը։ Դեռ յերկու որ ել չեր անցել կարմիր բանակի
զրամասների կողմից կվովը գրավելուց հետո, և արդեն
հաց թխելու և վաճառելու գործն սկսված է։

Ընկ. Միշենկոյի առանձնասենյակն են մտնում Լվովի
գավառի Սորոկի գյուղի գյուղացիական կոմիտեին ներկա-
յացուցիչներ կրոչակը և կրեպասը։ Այդ գյուղի 230 գյու-
ղացիական աներ ունեն ընդամենը 250 հեկտար հող, իսկ
միայն կալվածատեր Ստոյելսկին ունի 500 հեկտար։ Կալ-
վածատերը, հասկանալի յի, փախել է։ Յեզ կոմիտեին ներ-
կայացուցիչները, վորոնց ընտրել ենին մի որ առաջ գյու-
ղացիների ընդհանուր ժողովում, յեկել են կարմիր բանակի
ներկայացուցչի մոտ, վորպեսզի վճռեն կալվածատիրական
տնտեսության հարցերը։

Նրանց պարզաբանում են, թե ինչպես վարվել հողի
հետ, ինչպես կաղմակերպել հացահատիկի կալսումը։ Կոմի-
տեն պետք է հաշվի առնի կալվածատիրական դույքը, պահ-
պանի և կարգադրություն անի։ Ինքնազլուխ վոչ մի գործո-
ղություն չանել։

Գյուղացիական կոմիտեի դեկեպացիային փոխարինում
և ինժեներների մի խումբ։ Ինժեներ-ելեկտրիկ Մարկուսը
հանձնաբարություն և ստանում կարգի բերել ելեկտրոկայան-
ների աշխատանքը։ Ինժեներ Ռեմիլսկին ձեռնամուխ և լի-
նում արագորեն վերականգնելու ջրմուղը։ Ինժեներ Բաղիլե-
վիչը կարգ կահմանի քաղաքի հասարակական շենքում։

Բայց գրանով չի ավարտվում զրույցը։ Ինժեներները
տալիս են ուրիշ մասնագետների՝ աղդանուններ, վորոնք
կարող են կարգավորել քաղաքային տնտեսության մյուս
ճյուղերը։

Առանձնասենյակ և մտնում հացի մի փոփ տեր։ Նա
պարապատ և ձեռնամուխ լինել հաց թխելու գործին, բայց
չէիտե՛ վորտեղից ալյուր ճարի։ Նրան արվում և հասցեն։
Բայց միաժամանակ նա նախազդուշացվում եւ, վոր ալյուրը
նրան բաց և թողնվում քաղաքում գոյություն ունեցող
զնով, և վոր, հետևաբար, նա նույնպես պետք և հացը վա-
ճառի առանց լրացուցիչ, սպիկուլատիվ վերադիրների։

Ընկ. Միշենկոյի մոտ յեկալ մինչև այժմ լվովում վոչ
հայտնի մի մարդ։ Նա իրեն հանդես ե բերել կրիտիկական
մոմենտում, յերբ զատերը գլուխները կորցրել եյին, թողել
եյին իրենց տեղերը և թաղնելի։ Նրա ազգանունը Գերցող
է։ Նա իր վրա վերցրեց տրամվայի բանվորներին և ծառա-
յողներին կաղմակերպելու գործը։

Գալով Ընկ. Միշենկոյի մոտ, այդ փոքրիկ, աննկատե-
լի աշխատավորն առաջարկեց վերականգնել տրամվայի և
ալտորուսի յերթեկնեկությունը քաղաքում։ Այդ զրույցը կա-
յացավ սեպտեմբերի 24-ին։ Այն ժամանակ պայմանավոր-
վեցին, վոր տրամվայի յերթեկնեկությունը կսկսվի սեպտեմ-
բերի 25-ից։

— Ստախանովաբար կարմի, — Հայտաբարեց Գերցողը։

— Իսկ դուք վո՞րտեղից գիտեք ստախանովականների
մասին, — Հարցը ին նրան։

— Ինչպես թե։ Յես ամեն որ ժամը 24-ին լսում եյի
Մոսկվայի ռադիո-հաղորդումները։

Իսկ Սարնա քաղաքի քաղաքային ժամանակավոր վար-
չության նախադաշը պատմում ե։

«Քաղաքում ժամանակավոր վարչություն և ստեղծված,
վորի աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունե-
նում յերկաթուղարքին հանգույցի բանվորների և ինտելիգեն-
ցիայի ներկայացուցիչները։

Կյանքը նորմալ ընթացքի մեջ և մտնում է կարգավորված
և սննդամթերքների ու ապրանքների առևտուրը։ Կիս-

թատրոնում ցուցադրվում են խորհրդային կինոֆիլմեր։
Բանվորական յերիտասարդության ակտիվը ձեռնաժուիր յե-
ղալ քաղաքային ակումբի կազմակերպմանը։

Յերկաթուղային հանգույցի բանվորները յեռանդում
կերպով վերանորոգում են շոգեմեքենաները և լայնացնում
են յերկաթուղու գիծը, վորը մեզ մոտ 7 սանտիմետրով
նեղ ե, քան ԽՍՀՄ-ում։ Քաղաքում ստեղծված են բանվո-
րական գվարդիայի դրուժինաներ, վորոնք հեղափոխական
կարգ են սահմանում։ Վաղը լույս ե տեսնում քաղաքային
թերթի առաջին համարը։

Ամեն որ մերձակա գյուղերից քաղաքի վարչություն են
դալիս 100-ից ավելի գյուղացիներ, գյուղացիական կոմիտե-
ների ներկայացուցիչներ։ Գյուղատնտեսական բոլոր աշխա-
տանքները նորմալ են ընթանում։ Այցել ենք ճակնդեղի մաս-
սայական հավաքմանը։ Ավարտվում ե աշխանացանը։ Զքա-
վորությանը, վորը ցանքի մատերիալ չունի, գյուղացիա-
կան կոմիտեները ոգնություն են ցույց տալիս կալվածա-
տիրական մթերանոցներից վերցրած սերմացվով։ Գյուղա-
ցիական կոմիտեները հաշվառման են յենթարկել կալվածա-
տիրական բոլոր հողերը, կաղմակերպում են այդ հողերից
հավաքած հացահատիկի կալսումը։ Ամենուրեք պատրաստ-
վում են հմիների (վոլոսաների) գյուղացիական կոմիտեների
ընտրությունների համար գյուղերի ներկայացուցիչների
հրավիրմանը։

Գյուղական բնակչությունը ձգտում է մեզ ոգնել մեր
աշխատանքում։ Նա ակտիվ կերպով մասնակցում է թաղ-
նըլած սպաների, ժանդարմների, ոսադնիկների՝ ուկրաինա-
կան ժողովրդի թշնամիների ձերբակալմանը...


Մեր ավանի, ինչպես նաև ամբողջ Արևմտյան Ուկրաի-
նայի բնակչությունը վերապրում է իր կյանքի բնկման մեջ
և ուրախ որերը։

Արևմտյան Ուկրաինայի աշխատավորները, վորպես հա-
վասարներ հայտարների մեջ, վորպես իրենց յերկրի տե-
րեր ու իրենց յերջանկությունը կերտողներ, վոտք են դնում
նոր, ազատ կյանքի ուղին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Արևմտյան Ուկրաինան սուսական վաղեմի յերկիր և	4
Հարուստ, բայց հետամնաց յերկիր	13
Արևմտյան Ուկրաինայի արգյունաբերությունը դազութային ճնշման տակ	19
Գյուղացիությունը պաների լծի տակ	26
Պանական լեհաստանը—ժողովուրդների բան	46
Դեպի նոր կյանք	55



Թարգմանիչ Ռ. Փորառվյան
Խմբագիր Ռ. Շիրոյան

Տեխն. լամբ. Ա. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դոլեւյանյան

Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արովյան

Գլավլիոնի լիազոր № Ն. 2915, հրատ. № 753
Պատվեր № 240, ակրած 5000

Հանձնվել ե արտադրության 5/XI 1939 թ.
Սառըազրվել ե սպազրելու 21/XI 1939 թ.

Գինը 80 կ.

Քաղաքական գրականության Գետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալահարգյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0198530

916.80 ч.

Д. МИН

ЗАПАДНАЯ УКРАИНА

Государственное издательство политической литературы
Ереван, 1939